



Ղևոնդ Ավիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Յանուարի 6 ի Հայս

ՏԱՐԻՈՅՆ առաջին ամիսն՝ մեր կիսագնտին վրայ, գրեթե ամեն տեղ ըստ կերպարանաց բնութեան տխուր է, քիչ շատ ձմեռն ըլլալով . գոր միայն քաղաքական եւ եկեղեցական տօնք կու մխիթարեն եւ յիշատակք անցելոց կու գբօսեցընեն: Այս ամիս մեր Հայաստան աշխարհին երեսն այլ ամենէն սգակերպ եւ ծանր երեւոյթներէն մէկը կ'ընծայէ, գրեթե բոլորովին ձիւնով եւ սառնամանեօք ծածկուած . ձմեռն հոն իր աթոռոյն վրայ անշարժ կ'երեւի, կամ բուքերով երկինք երկիր մրրկելով, կամ թէ եւ պարզ ընէ՝ անանկ չոր եւ բարակ ցուրտ մը կու տարածէ օդուն մէջ, որ կարծես թէ արեւ՝ իր պայծառութիւնը միայն պահեր եւ կրակը մարեր է: Հա՛պա գիշերը . երբ չորացած սառնապատ ծառոց միջէն սարսռալի օձասուլիկ պախրցին կամ արեւելեան հովն, գոգաւոր ձորակներու մէջ որոտալով այն երկայն վայերը վույերը լսեցընէ՞: ... Գոցեցէ՛ք գոցեցէ՛ք դուռն ու երդիք, ամեն ճեղք ու ծակտիք: Ո՛հ, ի՛նչ քաղցր է, Հայկակ, շարուիլ նստիլ ամրածածուկ ձեղումն մը տակ, թէ եւ հողէ ըլլայ, կարմրաբոց փռան կամ թոնրի մը եզերք, եւ 14 15 ժամ երկայն գիշերուան քառորդ մաս մը անցեալ դիպուածոց, եւ մանաւանդ հայրենեաց, ամսոյն նոյնաթիւ օրերուն մէջ հանդիպած բաները գրուցելով վիպասանելով անցընել: Ո՛րչափ ցանկալի էր մեզի այլ եկեղեցականին հետ քաղաքական եւ ազգային Յայսմաւորք կամ Հայադիր մ'ունենալ . առաւօտը գայն կարդալ, իրիկունը ասով գբօսնուլ կրակին բոլորտիքը:

Յանուար ամսոյս մէջ գիշեր մը եւ օր մը կայ, գոր Հայն գրեթէ ամեն ազգէ աւելի մեծահանդէս կ'անցընէ, եւ չի կրնար տան մէջ արգիլեալ մնալ, այն որ ձմեռ չկայ, փոթորիկը կուրծողու, ձիւն բուր կ'արհամարհէ, դուրս կ'ելլէ, կու փութայ յեկեղեցի, Աստուածայայտնութեան տօնը կատարելու, եւ եռանդեամբ ցատքըտելով թզաչափ թանձր սառեր անգամ կու կոտորէ, թմրած պաղած ջուրը կ'արթնցընէ, մէջը կու մտնէ՝ քրիստոսանիշ խաչին կնքահայր ըլլալու :

Այդ մեծ տօնին օրը սովորական հանդէսներէն զատ՝ շատ նշանաւոր դէպք այլ հանդիպած են մեր նախնեաց ատեն . որոց մէկ քանին յիշենք այս իրիկուն մեր ընտանի կրակարանին եզերքը բոլորած, թողլով վիպասանից զանոնք բանազարդելու, եւ գուսանաց՝ երգելու: Յիշելու դէպքերէս շատն հանդիպած է մեզմէ 800 եւ աւելի տարի առաջ, ԺԱ դարուն երկրորդ քառորդին, մեր Պետրոս կաթողիկոսին օրերը . որ այն դէպքերուն գլխաւորին պատճառաւ՝ Գետադարձ ըսուեցաւ . եւ թէպէտ քիչ մը չափէն աւելի ազգասէրք եւ չափէն պակաս յունասէրք այլայլեր են եղածին պատմութիւնը, բայց անհիմն չերեւիր իր պարզ եւ հին վկայութեանը մէջ: Եթէ Պետրոս կաթողիկոսի աջն հրաշագործ չէր, իր ձեռքը եղած խաչն իրմէ առաջ այլ շատ հրաշքներ ցուցեր էր . մենք կու սիրենք Պետրոսի պերճախօսիկ շարականները, բայց չենք կրնար գովել իր պերճասէր հնարքները, որովք եկեղեցիէն աւելի քաղաքական տեսութեանց մէջ անուն թողած է: Իր քառասնամեայ հոգեւոր տիրութեան առաջին տարիները՝ Անի թագաւորաբնակ քաղաքին մէջ կու նստէր, եւ երկրորդ թագաւորի մը պէս փառօք կու փայլէր, 500 մեծ գեղերու տէր ըլլալով, եւ հայրապետանոցին մէջ կամ իր հետ քանի մը վարդապետ, 12 եպիսկոպոս, 60 կրօնաւոր քահանայ եւ 500 աշխարհիկ երէց պահելով . իսկ իշխանութեանը տակ կային 500 եպիսկոպոս կամ թեմ, որ թէ եւ չափազանց երեւի, գոնէ եղածին կրկնէին աւելի չէ: Ընդդիմակ բանն այս է, որ որչափ այն Հայոց կաթողիկոսն իշխանասէր կ'երեսար, ժամանակակից թագաւորն այլ՝ Յովհաննէս – Սմբատ՝ իմաստասէր էր . երկուքն այլ խորագէտ, որով երբեմն համաձայն՝ երբեմն հակառակք իրարու: ... Բայց ի՞նչ պէտք է մեզի հիմա ծաղկած եւ վաճառաշահ մայրաքաղաքի մը մեծերուն քաղաքական գաղտնիքը քննել . մինչդեռ չորս դին համբաւ կու հնչէ՝ թէ մեծագոր կայսրն Վասիլ Կ . Պօլսէն ելեր եւ շատ զօրօք կու գայ ի Պոնտոս . կ'անցնի ի Տայս, Վրաց թագաւորէն պահանջելու այն երկիրները՝ գոր Դաւիթ կիւրապաղատն Տայոց թողեր էր կայսեր, եւ Վրացին կորզեր էր: Շրջակայ

թագաւորք եւ ազատագլուխ իշխանք վախով կամ պատուով կու փութան կայսեր առջեւ . մեր բագրատունի թագաւորն Յովհաննէս Սմբատ, ոչ այնքան թանձրամտութեանն համար կու դանդաղի եւ չի շարժիր, որչափ մեծամտութեամբն չուգեր Հայոց իշխանութեանց մէջ իր նախապատիւ աթոռը նուաստացընել, եւ իր դրացի մանրիկ թագաւորաց նմանիլ . բայց՝ անոնցմէ, եւ ինչուան իր եղբօրէն, եւ այլ անլի կայսեր սպառնալից յօնից համբաւէն կասկածելով, իր տեղ անոր երեսը պատուելու կ'ողարկէ գՊետրոս կաթողիկոս: Սա իր եկեղեցական հետեւողաց եւ սպասաւորաց հետ՝ արքունի դրան մարդիկ եւ զինուորական գունդ առած, իբրեւ երկթագեան իշխանապետ մը՝ կ'ելլէ կայսեր դիմաց, անոր ձմերոցը՝ ի Պոնտոս . եւ ըստ արժանոյն պատուելով եւ պատուրելով, կու հրաւիրուի մերձակայ Աստուածայայտութեան տօնին օր ջրօրհնեաց հանդէսը կատարել . ըստ ոմանց ճորոխ գետոյն վրայ, այլ հաւանօրէն ըստ այլոց՝ Տրապիզոնի գետակին վրայ: Յետ աղօթից եւ օրհնութեանց՝ երբ միտունը կու թափէ ի ջուրն՝ եւ մէջը կու ձգէ այն խաչը՝ որ մասն ունէր ի բուն փրկչական խաչէն, եւ ի Ս . Սեդբեստրոսէ ընծայուած էր առ Լուսաւորիչն մեր, յանկարծ ջրէն լուսոյ ցնցողք կու ծագեն, ի զարմանս ամենեցուն եւ ի մասնաւոր պարծանս Հայոց: Այս է պարզ եւ ստուգագոյն պատմութիւնն՝ զոր ժամանակակիցն Արիստակէս Լաստիվարտցին պատմէ, եւ իրմէ առած Վարդան այլք . որք ոչ քաղաքը յիշեն եւ ոչ գետոյն անունը, եւ ոչ ասոր ջրոց յետս ի վեր դառնալը, ինչպէս կ'ըսեն Կիրակոս եւ այլք: Վանայ Վարազայ վանքը պարտողն տեսած է հոն Պետրոս կաթողիկոսի գերեզմանը այսու արձանագրութեամբ . «ԹԻՒՆ ԳՃՀԱ: ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ «ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ . ՈՐ Ի ՏՐԱՊԻԶՈՆ «ԶԳԵՏՆ ՃՐՈՒՄ ԱՐԳԵԼԱՑ ԱՌԱԶԻ ՎԱՍԻԼ ԱՐՔԱՅԻՆ»: Այս արձանագիրս կաթողիկոսին մահուան ժամանակակից չէ . վասն զի ինքն այդ թուականէն շատ տարի վերջը վախճանեցաւ ի Սեբաստիա, եւ հոն այլ ի Ս . Նշան վանս կայ անոր գերեզմանն . ըսել է որ նշխարաց մէկ մասն փոխադրուեր է ի Վարագ, ուր երբեմն նստէր, եւ գերեզմանին վրայ գրուեր է ջրօրհնեաց հրաշից թուականն, որ եւ է ստուգիւ 471 (ԳՃՀԱ) Հայոց թուականն (1022 23 ամ Քրիստոսի) . թուականը այսպէս կու համեմատենք, բայց ճրոխ (կարդա՛ ճորոխ) գետը չենք կրնար Տրապիզոնի մոտեցնել, վասն զի լեռներով զատուած եւ շատ հեռու են իրարմէ . ուրեմն յայտնի սխալ կայ ասոր մէջ, եւ վերջին ժամանակի արձանագրութիւն մ'է: Զայն այլ թողլով հանդերձ յօդուածոց պատմութեամբք, կարդամք գլխաւոր

դիպուածին մէկ ճոխաբան գրուած նկարագրութիւնը, որոյ հեղինակն մեր ծանօթ պատմիչներէն չէ, եւ քիչ մը ճամարտակող եւ ճակատամարտող է:

Եւ գնացեալ կաթողիկոսն առ կայսրն ի Տրապիզոն, ունելով ընդ իւր եպիսկոպոսունս երկոտասան եւ եօթանասուն քահանայս յաբեղայից . եւ երկու բանիքուն վարդապետս, զբազմիմաստն զՅովսէփ Հընծուցն, եւ զքաջն եւ զանյաղթն զԿոզեռն Յովհաննէս . այլ եւ ի զինուորական դասէն եւ յաւագաց արս . երեք հարիւր: Եւ առեալ ի թագաւորական տանէն զանձս ոսկոյ եւ արծաթոյ, ձիս եւ ջորիս: Զոր տեսեալ ինքնակալն Վասիլ զՏէր Պետրոս հայրապետն՝ յոյժ ուրախացաւ . քանզի համբաւ առաքինութեան նորա եւ վարուց սրբութեան՝ հասեալ էր յառաջագոյն առ թագաւորն: Վասն զի էր սքանչելի այր, լի ամենայն բարի մասամբ, եւ ունէր շնորհ իմն աստուածական բժշկելոյ զախտաժէտս եւ հալածելոյ զդէս: Վասն որոյ եւ Վասիլ զերագոյն մեծարեաց զնա քան զամենայն պատրիարքունս Յունաց . եւ լրջամտութեամբ ընկալաւ զբերեալ ընծայս նորա . եւ մեծաշուք փառօք պատիւ արարեալ եպիսկոպոսացն եւ ազատացն՝ որ ընդ նմա էին: ... եւ ի նոյն ատուրսն եհաս տօնն ծննդեանն եւ յայտնութեանն Քրիստոսի . եւ ել ամենայն զօրօքն իւրվք եւ քահանայիւք յօրհնել զջորն: Կոչեաց եւ զկաթողիկոսն Հայոց իւրայնօք ի յեզր գետոյն . եւ հրամայեաց զի նախ Տէր Պետրոս օրհնեսցէ զջորն, եւ ապա Յոյնք: Եւ յորժամ օրհնեաց եւ Լարկ Տէր Պետրոսն զմեռոնն ի ջորն, եւ զկնի սուրբ իւղոյն հարկանէ երեք անգամ զսուրբ խաչն ի գետն . եւ ահա հոր սաստկապէս բոցագոյն ծիրանածաւալ փայլատակեաց ի խաչէն, եւ իբրեւ զաղեղն որ յամպս դնի ցոլացեալ՝ խորան առնոյր ի վերայ գետոյն . եւ որպէս զսրահատաճար Աստուծոյ ի մէջ առեալ ունէր զամենեսեան զարս եւ զկանայս . եւ շող լուսոյն բակ առեալ պարփակէր զբազմութիւն ամբոխին ընդ ինքեամբ: Եւ լուսաւորեցան դէմք մարդկան առ հասարակ որպէս զվարդ կարմիր . եւ լոյս ելանէր ի խաչէն իբրեւ զյորդահոս ջուրս որ բղխեն յաղբերաց: Իսկ սուրբ խաչն երեւէր ի ձեռն կաթողիկոսին որպէս բոց վառեալ լուսով . եւ ի լուսոյ անտի երփն երփն հատանէր խաչաձեւ ըստ չափոյ խաչին, եւ խաղայր ի վերայ ջուրցն իբրեւ զթռչուն սլացեալ որիշ որիշ ի միմեանց . եւ հոտ անուշութեան լնոյր զամենեսեան: Իսկ բազմութեան ժողովոյն զահի հարեալ կային եւ աղաղակէին եւ ասէին, Տէր ողորմեա: Եւ մինչդեռ նոքա աղօթէին, ժողովեցաւ լոյսն միագունդ, եւ երիցս անգամ եհար զջուր գետոյն եւ ամփոփեցաւ լոյսն ի ծոց խաչին . եւ ջուր գետոյն գետեղեալ ի կրունկն դառնայր

Եւ զառ ի կոյս արգելաւ վայր մի: Յայնժամ զարհուրեալ ամբոխին եւ բազմութիւնն անդեալ յերկիր դողային: Եւ սուրբ խաչի տեսնագրեաց կաթողիկոսն երիցս անգամ զգետն եւ ասաց . Տեսին զքեզ ջուրք Աստուած, տեսին զքեզ ջուրք եւ երկեան, խորք խոռվեցան . եւ տեսին ամենայն ծագք երկրի գիրկութիւն քո, եւ ժողովուրդք զսքանչելիս սուրբ նշանի քո: Եւ արդ որպէս ի ձեռն սուրբ խաչիս քո եկաց ջուր գետոյս կանգուն, գնասցէ դարձեալ յընթացս իւր որպէս յառաջն: Եւ ապա դարձաւ գետն ի տեղի իւր, եւ խաղացեալ գնայր որպէս յերէկն եւ յեռանդն: Յայնժամ թագաւորն Վասիլ եւ ամենայն զօրք նորա անկան առ ոտս երանելի սուրբ կաթողիկոսին Պետրոսի . եւ մեծագոչ հառաչանօք համբուրելին զսուրբ նշանն եւ արկանելին զօրհնեալ ջուրն ի վերայ գագաթանց իւրեանց: Իսկ թագաւորն Վասիլ դնէր զթագն ի գետինն . եւ հրամայէր Տէր Պետրոսին արկանել ավոլմն իւրով զջուրն օրհնեալ ի վերայ գլխոյն իւրոյ: Եւ առեալ կայսրն զգետարգել սուրբ նշանն ի ձեռս իւր եւ անյագաբար համբուրէր գնա, եւ նովաւ կնքէր զամենայն զգայարանս իւր . նոյնպէս եւ մետրապօլիտն եւ ամենայն ժողովուրդքն՝ եռափափաք համբուրի ողջագուրելին զամենայաղթ սուրբ նշանն եւ զաջ կաթողիկոսին, եւ ի համբուրելն զսուրբ նշանն՝ բազմաց լինէր առողջութիւնն: Եւ մինչեւ օրն տարաժամեցաւ՝ ոչ աւարտեցաւ համբոյրն ժողովրդեանն ի բազմութենէ ամբոխին»:

Պետրոս կաթողիկոս այս հանդէսը եւ դեսպանութիւնը կատարելէն ետեւ՝ դարձաւ յԱնի . բայց երկար ատեն հոն չմնաց, թագաւորին եւ իր մէջ տարաձայնութիւն ընկաւ . Յովհաննէս մերժեց գնա ի կաթողիկոսական աթոռոյն, եւ տեղը գրաւ գԴեղսկորոս Սանահնի վանաց եւ թեմին արքեպիսկոպոս առաջնորդը . որ հարկաւ քիչերուն ընդունելի եղաւ, անոր համար ստիպեցաւ թագաւորն նորէն գՊետրոս դարձնել տալ յաթոռը, միջնորդութեամբ Յովսէփայ Աղուանից կաթողիկոսի . որուն հետ 4000 եկեղեցականք այլ ժողովքի եկան յԱնի . եւ թագաւորն ու կաթողիկոս հաշտեան: Այս հանդէսն այլ մասամբ Աստուծայայտնութեան տօնին եղաւ . եւ երբ հակաթոռ կամ բռնադատեալ կաթողիկոսն Դեղսկորոս՝ ատուր պատշաճ տօնը կու կատրէր, քանի մը յանդուգն անձինք գլխէն քողը պատռեցին, որ կաթողիկոսութեան նշան էր, եւ դարձուցին զինքը իր վանքը, ուր եւ յօժարութեամբ գնաց, բայց այդ անարգանաց հարուածը շատ ծանր էր իրեն, քիչ ատենէն սրտառած մեռաւ . յոմանց իբրեւ բռնաբարող՝ դատափետեալ, եւ յոմանց իբրեւ ականաւ յանձնառու՝ արդարացեալ, եւ իր

ճգնասէր բարուցը եւ գիտութեանը համար պատուեալ:

Դարձեալ յետ ինն տարւոյ (1045) նոյն ինքն Պետրոս կաթողիկոս՝ Ջրօրհնեաց հանդէսը կատարեց ուրիշ խառն տեսարաններով ի Կարին գաւառի . որ հիմակուան Էրզիրում քաղաքէն գատ՝ անուանի եւ հարուստ քաղաքաւան մ'այլ ունէր, Արծն ըսուած, Կարնոյ դաշտին մէջէն անցնող եփրատական Սեւ ջրոյն աջ կողմը, չամբին (Սաղլըզ) մօտ, որ հարիւրաւոր եկեղեցիներ ունէր եւ վաճառականութեան բարեօք լցեալ էր, եւ մեր պատմելու դիպուածէն իրեք չորս տարի ետեւ այրելով եւ ւարելով ի Թուրքաց՝ հիմա թողած է իր անուան եւ նշխարաց յիշատակ՝ Գարաարզ եւ Վաղաւեր գեղերը . ուր թերեւս հնախոյզք դեռ կարենան գտնել հետաքննութեան արժանի բաներ: Պետրոսի երկրորդ անգամ կաթողիկոս նստելէն մինչեւ այս նոր հանդիսին սակաւաթիւ տարիներուն միջոց՝ Հայաստան շատ յեղափոխութիւններ տեսեր էր . Յովհաննէս թագաւորն մեռած . որդին Գագիկ թագաւորութենէ գրկած: Անի մայրաքաղաքն ի ձեռն Յունաց անցեր, թագաւորագունք ելեր է Փոքր Հայս գացեր էին . իսկ ինքն Պետրոս որ Անոյ վաճառման կամակից էր՝ նստեր էր հոն առաջին փառօքն, եւ քաղքին նոր յոյն քաղաքապետէն այլ պատիւ կ'ընդունէր: Ասով բուն քաղաքացեաց այնչափ հաճոյ չէր ըլլար . քիչ ատենէն Յունաց այլ կասկածելի եղաւ . եւ երբ նոր քաղաքապետ եկաւ՝ կայսեր հրամանաւ գինքը քէց անկէ եւ հրամեց երթալու նստելու յԱրեն Կարնոյ . ուր եւ վերը յիշեալ տարին մեծաւ հանդիսի կատարեց Ջրօրհնեաց հանդէսը Եփրատայ նորընծայ վտակաց մէջ: Երբ խաչալուայ ընելու պահն հասաւ եւ կտրիճք պատրաստուէին նետուելու ի ջուր, տաճիկ մ'այլ ուզեց անոնց հետելիլ . կաթողիկոսն հասկցընել տուաւ անոր՝ թէ այդ բանը քրիստոնէից միայն կու պատշաճի իբրեւ կրօնական հանդէս մը . տաճիկն այլ իմացուց որ ինքն այլ քրիստոնեայ ըլլալու եւ մկրտուելու համար կ'ուզէր մտնել ի ջուրն, եւ հաւանութեամբ կաթողիկոսին մտաւ: Այն ատեն միտոնակիր փոքրաւորն՝ ապակեայ շիշը ձեռացը վրայ գարնելով կտորեց եւ թափեց թէ ջրին եւ թէ նորահաւատին վրայ, երկուքը մէկէն կնքելով . բայց շիշը կտորելու ատեն ապակւոյ կտոր մը ձեռքը վիրաւորելով՝ իողը, ջուրը եւ արիւնը մէկտեղ խառնեց: Այս բանս, կ'ըսէ ժամանակագիրն, անյաջող դիպուածի մը գուշակութիւն սեպեց հանդիսատես ժողովուրդն . մանաւանդ երբ իրօք այլ հանդիպեցաւ: Վասն զի երբ յետ հանդիսին կաթողիկոսն նստեր էր ի սեղան, յանկարծ կայսերական հրամանաւ մարդիկ եկան գինքը վերուցին, տարին Խաղտոյ Առինճ ըսուած

գիտին բերդը, որ հիմա Գաղտառիճ կ'ըստի, եւ երկու գեղ է, մեծ եւ փոքր, Կարնոյ եւ Խաղտեաց միջասահման: Նոյնպէս քիչ ատենէն Պետրոսի քեռորդին եւ յաջորդը Խաչիկն այլ՝ բռնեցին եւ ուրիշ բերդ մ'արգիլեցին . յետոյ գերկուքն ալ ի Կոստանդնուպօլիս խաւրեցին:

Այս դիտուածէս եօթն կամ ութ տարի ետեւ (1052)՝ նոյն կաթողիկոսին որը, բայց ոչ իր ներկայութեանը, նոյն մեծ տօնին խթման գիշերը ցաւալի դիպուած մը հանդիպեցաւ ի Կարս քաղաքի, որ Արծին նման վաճառականութեամբ հարստացեր էր, եւ Անիի պէս առանձին թագաւորաց մայրաքաղաք էր քիչ մ'առաջ . մինչդեռ պաշտօնասէրք գիշերային ժամերգութիւնը կատարէին, եւ ամենեւին թշնամոյ կասկած մը չկար, եւ անոր համար քաղաքապահ զօրքն այլ անգգոյշ էին, տօնին զբաղած, Թուրքաց Տօղրուլ բէկ սուլտանին հօրեղբօրորդոյն ապստամբ Գուդուլմուշին թափառական ասպատակներն՝ ձմերային սովալլուկ գայլոց պէս մտան ի քաղաք, եւ սրբազան ու ազգային հանդէսները յարցունք եւ յարին դարձուցին . տուն եւ եկեղեցի ողբոց եւ մահու տեղ եղան . ով որ կրցաւ քաղքին ամուր բերդը փախչիլ՝ ազատեցաւ . մնացելոց շատն ջարդուեցաւ, ամենքն կողոպտեցան իրենց ստացուածքներէն . հարստութեամբ լցուած քաղաքն աւեր դարձաւ . վասն զի անգգամ կողոպտիչքն ինչպէս աւազակօրէն մտան՝ այնպէս ելլելն այլ բաւական չսեպելով՝ կրակ այլ տուին, եւ ետեւնէն սեւ ծուխը վկայ թողուցին իրենց գազանութեանը: Բայց Կարս իր ամուր բերդին պատճառաւ բաղդաւոր գտնուեցաւ քան զԱրծն, նորէն նորոգուելով . սակայն նոյն պատճառաւ այլ աւելի շատ անգամ պատերազմի հարուածներ եւ մեծ նեղութիւններ կրեց, ինչուան մեր օրերը, (1855):

Թշնամիք դիտելով եւ գիտնալով որ Հայք յանուարի վեցին մեծ տօնախմբութեան պատճառաւ տուներնէն տեղերնէն կը հեռանան, շատ անգամ նոյն օրը վազած են անոնց վրայ, եւ ազգերնուս մեծագոյն տօնն ի սուգ դարձուցեր են, օրհնեալ ջուրն այլ յարին մինչեւ ազգային առակ եղեր է ըսել .

«Աստուած պահէ

Յայտնութիւնի հեծելէն,

Վարդավառի հեղեղէն»:

Բայց մենք թողլով հիմա այս տխուր տեսարանները, քիչ մ'այլ ուրախ դիպուածներ տեսնենք . փոխադրինք ուրիշ հայ աշխարհք մը, անցնինք դարուկէս ժամանակ, երթանք ի Կիլիկիա, մեր վերջի թագակապ ցեղին հանդէսներուն ներկայ ըլլալու, նոյն այս սրբազան օրը զոր թերեւս աւելի քան զԲագրատունիս պայծառապէս տօնէին Ռուբինեանք . վասն զի առաջիններուն կորուսած թագը՝ իրենց գլուխը դրուեցաւ յետ իբր 100 ամաց՝ յայտնութեան տօնին օր, յամին 1198, ի ներկայութեան նուիրակաց զանազան ազգաց: Այս ազգաշուք փառաց նորոգութիւնն՝ արդիւնք է քաջութեան, ճարտարութեան, նաեւ արդար փառասիրութեան Լեւոնի, որ ըստ կարգի պայազատաց՝ Բ է այդ անուամբ, եւ ըստ կարգի թագաւորաց Ա կ'ըստի: Իր նախորդքը սովորաբար Պարոն եւ երբեմն սեբաստոս կամ մարգիզ կ'ըսուէին, կամ մեծ իշխանք, եւ Լերանց իշխեցող . որովհետեւ առաջ Փոփոկիոյ եւ Իսաւրիոյ լերանց, յետոյ Կիլիկիոյ լերանց եւ դաշտաց սկսան տիրել: Լեւոնի պապուն եղբոր եւ նախորդին՝ քաջին Բ Թորոսի անուամբ այլ՝ Թորոսի երկիր կոչուեցաւ իր վիճակն . իսկ այս Լեւոնս իր պապուն՝ Ա Լեւոնի կործանած անունը կանգնելով՝ իր տիրած երկիրն ալ Լեւոնի երկիր անուանել տուաւ: Քաջութեամբ եւ խորամանկութեամբ շրջակայ իշխանաց ահաւոր եւ պատկառելի ըլլալով եւ եւրոպացի մերձաւոր իշխանաց սիրելի եւ օգնական, համարձակեցաւ Ալեմանաց Փրետերիկոս կայսերէն թագաւորութեան թագ ուզել, երբ կայսրն իր երկիրը եկաւ ի Սելեւկիա քաղաք, ուր փութացաւ Լեւոն խաւրել ընդ առաջ նորա զկաթողիկոսն եւ զՍ . Ներսէս Լամբրոնացին . դժբաղդաբար ծերունի կայսրն հոն անզգուշաբար գետոյն մէջ լուացուելով խեղդեցաւ, եւ թագաւորութեան խոստումը անկատար մնաց: Բայց Լեւոն դարձեալ խնդրեց զնոյն անոր յաջորդող որդիէն, յԵնրիկոս կայսերէ, եւ նաեւ ի սրբազան պապէն Կելեստինոսէ, որք քան մը պայման պահանջելով ի Լեւոնէ (ի նշան հաւատակցութեան եւ միաբանութեան) խաւրեցին իրեն փափագած պերճափայլ թագը, եւ առիծանիշ դրոշ մը, յամին 1197, ի ձեռն Կոնրադոսի ծիրանազգեաց արքեպիսկոպոսին Մայենցայ, որոյ ընդ առաջ խաւրեց Լեւոն՝ իր խնամին եւ քարտուղարը՝ Յովհաննէս Սոյ արքեպիսկոպոսը: Յաջորդ նոր տարին ի տօնի Աստուածայայտնութեան՝ ժողովեցան ի Ս . Սոփիա եկեղեցի Տարսոնի, եւ մեծաւ հանդիսի թագաւորեցուցին զԼեւոն ի վերայ Հայոց . օծողն էր Գրիգոր Ապիրատ կաթողիկոսն, թագաւորն՝ վերոյիշեալ լատին եպիսկոպոսն՝ իսկ հանդիսատեսքն՝ դեսպանք կամ պայլք արեւմտեան տէրութեանց եւ վաճառակից

հասարակապետութեանց, կրօնակարգ ասպետք, պատրիարքն Ասորոց Անտիոքայ, մետրապօլիտն Յունաց, Երուսաղեմի Հայոց եպիսկոպոսապետն, վեց մեծաթոռ արքեպիսկոպոսք, տասն եպիսկոպոսք Կիւիկիոյ, բազմաթիւ վանահարք, վարդապետք եւ քահանայք . իսկ յաշխարհականաց յիսունի չափ բերդատէր հայ իշխանք (որոնց անունը եւ բերդերը կու համրէ Սմբատ գունդստապլ պատմիչ՝ Լեւոնի քեռան որդին), եւ ուրիշ լատինացի իշխանք Անտիոքայ եւ Կիպրոսի տէրութեանց: Հանդիսին փառքն Լեւոնի համբաւն ընդարձակեց . Պաղատայ խալիֆայն եւ Կոստանդնուպօլսոյ կայսրն իրենց կողմանէ այլ թագ խաւրեցին, իսկ Լեւոնի երկրին չորս կողմը եղող իշխանք, ըստ բանի Սմբատայ գունդստապլի՝ «ամսումն ճանապարհաւ հեռու յիշէին զանուն թագաւորին Լեւոնի, եւ անտես՝ դողային»:

Մեծին Լեւոնի թոռն Բ Լեւոն թագաւորն այլ, յետ 74 ամաց, նոյն քաղքին եւ նոյն քաղքին եւ նոյն եկեղեցոյն մէջ նոյն տօնին օրը յանձն առաւ թագաւոր օծուելու, եւ հանդիսին հռչակող ատենարան եղաւ իր քարտուղարն Վահրամ Բաբուն վարդապետ: Թագաւորք մեր եւ ժողովուրդք՝ իրենց մեծագոյն հանդիսի օր սեպէին այն օրը՝ յորում Քրիստոսի երեք անօրինական մեծ եւ փառաւոր յիշատակները տօնէին, թէ սրբազան թէ արտաքին հանդիսի:

Անշուշտ ախորժելի պիտի ըլլայ այս հանդիսից մէկ նկարագիրը լսել ականատես օտարազգիէ մը, որ Ա Լեւոնի թագաւորութեան երեքտասաներորդ տարին հանդիպեցաւ իրեն եւ տօնին, այս անձս է Վիլլէպրանտ օլտէնպուրկեան, Հաննովրէի Հիլտէս հայն քաղաքին կանոնիկոս վարդապետն, որ 1211 թուականին ճանապարհորդելով յարեւելս՝ եկաւ ի Կիւիկիա, եւ երկու ամսոյ չափ հիւրընկալութիւն գտաւ մեր թագաւորէն, որ նախ տեսաւ ի Տաքսոն, եւ յետոյ ի Սիս, որոյ համար կ'ըսէ . «Այս քաղաքս տէր թագաւորին մայրաքաղաքն է . բնակիչքն անթիւ եւ հարուստ, բայց պարիսպ չունի, անոր համար կրնայի աւելի քաղաքաւան կոչել քան թէ բուն քաղաք, թէ որ Հայոց արքեպիսկոպոսարանը չունենար . նաեւ Յոյնք հոն պատրիարք ունին: Սակայն ունի ամուր բերդ մը լեւան գագաթը, որոյ ոտքէն կու սկսի քաղաքը աստիճանաբար դար ի վայր տարածուիլ...: Զրօրհնեաց հանդէսը Հայք այս կերպով կատարեն, տօնէն 12 օր առաջ, զոր մենք (լատինք) խնտումով եւ կերուխումով կ'անցունենք, անոնք ի պատիւ տօնին՝ ապաշխարութեամբ եւ պահօք անցուցին, հրաժարելով ի ձկանէ,

ի գինւոյ եւ ի ձիթոյ, իսկ բուն խթման օրը բոլորովին ծոնապահութեամբ կեցան, որպէս զի յետ վերջալուսոյն պատարագը մատուցանեն, եւ բոլոր այն գիշերը աստուածային պաշտամամբք անցուցին: Իսկ երկրորդ օրը Քրիստոսի Ծննդեան տօնը կու կատարեն, ըսելով թէ Քրիստոս նոյն օրը ծնաւ, եւ յետ 30 տարւոյ դարձեալ նոյն օրը մկրտեցաւ: Առաւօտուն ամենքն փութային քաղքին մօտ գետոյն եզերքը երթալու, ուր որ թագաւոր տէրն այլ կ'երթար, այսպիսի կարգաւ: Ինքն թագաւորն բարձրահասակ ձիու մը վրայ հեծած էր, իր քովէն կ'երթային Ալեման ասպետաց կարգապետն, Սելեւկիոյ Հիւրնկալ ասպետաց բերդապետն, իրենց կրօնակից հազար ընկերներով, յետոյ գայր տէրն Ռուբէն, փոքր թագաւորն, (Լեւոնի եղբօր դստեր որդին), զոր ինքնակալն Ռթոն՝ ի խնդրոյ մեծ թագաւորին՝ թագով պսակել տուեր էր . ասոր ետեւէն կու գային իր երկրին ազնուականներն . եւ բազմութիւն զօրականաց գեղեցկազարդ հագուած, որոց ճորտերն ամեն մէկուն դրօշները եւ վառերը ձեռնունին բարձրացուցած, եւ անոնց սարած ձիերուն սանձէն բռնած՝ մեծ թագաւորին առջեւէն կ'երթային: Իրեն եւ ասոնց խումբին միջէն կու վազվոտէին բազմութիւն զինակիր փայեկաց, իբրեւ անձնապահք թագաւորին . իսկ բազմութիւն ժողովրդեանն չորս կողմէն կ'ողջունէր զնա սաստկաձայն աղաղակաւ, ՍՈՒՐԲ ԹԱԳԱՒՈՐ: Այսպիսի մեծ հանդիսի թագաւորն կու գար իջնելու իրեն համար գետոյն եզերքը կանգնած վրանին տակ: Իրմէ ետեւ կու գային Յոյնք եւ իրենց պատրիարքն՝ հետեւակք, շատ սրբազան սպասներով, եւ այնչափ փողերու եւ ուրիշ երաժշտական նուագարանաց ձայն ձգեր էին, որ աւելի հանդէս մը՝ քան թափոր մը կու ձեւանար: Ասոնք այլ իրենց որոշուած տեղը՝ գետեզերքը կու սպասէին ուրիշներուն: Յետոյ գային Հայոց եկեղեցւոյն ուխտն, մկրտելու խաչը բերելով եւ վայելչապէս յառաջելով՝ իրենց արքեպիսկոպոսին հետ . որոնց խոնարհական կերպը եւ վայելչակարգ թափօրը՝ շատ աւելի պիտի գովէին, եթէ մէկ երկայնամօրուք քահանայ մը (ասով՝ նման ուրիշներուն), դժբաղդաբար շփոթութեան պատճառ չըլլար . վասն զի ասիկայ վերոյիշեալ գետոյն խառնուող պզտիկ վտակէ մը անցնելու ատեն՝ ոտքին մէկ կօշիկը կորսնցուց, եւ ջրին ընթացքէն ազատելու համար անգգոշութեամբ աշխատելովը՝ եպիսկոպոսին եւ ուրիշներու անցնելուն արգելք եղաւ . թէ որ մէկն այսպիսի անհոգութիւն մընէր ի Հիլտէսիայն թափորի ատեն, սաստիկ յանդիմանութիւն կ'առնուր: Ասոնք այլ վերոյիշեալ գետոյն եզերքը՝ իրենց տեղը բռնեցին կեցան: Երբոր բոլոր թափօրն մէկտեղ եկաւ, սկսան ասդիւն երգել . եւ ինչուան կուրծքերնին իջած օդուոյց

կծկի նման երկայն մօրուքներուն շարժելէն կ'իմացուէր՝ որ աղէ ոյժ կու տային յունարէն եւ հայերէն աւետարաններ եւ ընթերցուածներ կարդալու ստեն, եւ այն կերպարանեալ Յորդանանը օրհնելով՝ բերած խաչերնին մէջը մկրտեցին, եւ աջ կողմէն աղանի մը թոռացին: Այն ստեն մէկն՝ իշու վրայ հեծած՝ գետոյն մէջ մտնալով եւ կանգուն կենալով՝ շաքարաձայն՝ կոկորդով կանչեց, Կեցցէ թագաւոր մեր յաիտեան . եւ դարձեալ, Օրհնեսցի եւ նախախնամեալ պահեսցի ամենայն ուխտ քրիստոնէից, եւ երբ ամենքն միաբերան անոր պատասխանելով՝ Ամէն կու կանչէին, ինքն երգապետն ջրին մէջ կու թապրլտրկէր, որ եւ ծիծաղելու պատճառ եղաւ շատերու: Յետոյ թագաւորն եւ ուրիշներն այլ այն ջրով իրենք գիրենք ցողեցին, իսկ Ասորիք մերկացած կու լուացուէին անոր մէջ:

,Այս արարողութիւնս լմըննալէն ետեւ՝ եկեղեցականք իրենց վանքը քաշուեցան, իսկ թագաւորն եւ զինուորականք փութացան դէպ ի դաշտերը . եւ պալարակապ երիվարները վազցնելով եւ նիզակներ նետելով՝ զինուորական խաղեր ըրին . եւ բոլոր օրը մեծ ուրախութեամբ անցուցին: Երկրորդ օրը ամենքն իրենց տեղը դարձած:

«Այս այլ գիտցէք, որ տէր թագաւորին՝ այդ (Միս) քաղքին քով իրեն գբօսանաց պարտէզ մը պատրաստեր է, որուն սքանչելի փափկութիւնները նկարագրելն՝ կու խոստովանիմ որ կարողութենէս վեր է: Տօնը կատարելէն եւ տէր թագաւորէն հրաման առնելէն ետեւ, որ գմեզ շատ մեծապէս պատուեց, եկանք Նաւարգա (Անաւարգա) ամուր բերդը... որոյ անուամբ թագաւորն իր նշանը «Նաւարգա կու հռչակէ»....:

Այսպիսի հանդէսներ՝ եթէ չկարենան այլ ձմեռուան սառամանիքը բոլորովին հալեցընել, գոնէ գունագոյն ծիածաններ կու ձգեն վրանին:

Ե . Զապէլ

+22 Յանուարի, 1252 .

Եւ դու գաչըս տակաւին, մատաղ բամբիչն, առ քեզ գերես,

Նագելիդ Զապէլ, միայն թագաւորեալ Հայոց դշխոյդ,

Ոչ գերկրի սոսկ եւեթ, այլ եւ գերկնից աչս եւ ըզսիրտ,

Խըտտըղեալ ի գեղ ոգւոյգ եւ գիրդ մարմնոյդ . եւ գքոյսըդ դու

Յերկրի՝ Հեթնոյ միայն, եւ ի յերկինս՝ Աստուծոյ տաս:

ՀԱՅԿ . ԺԶ . 1069 73

ՁԱՊԵԼ անուն՝ որ հիմայ շատ մերագգի ընտանեաց մէջ անուշութեամբ կու լսուի, աւելի անոյշ յիշատակներէ առաջ եկած է, եւ թերեւս աւելի քան ուրիշ ազգաց՝ մեզի նուիրական եղած . կան անոնց մէջ այլ Իգապել թագուհիք, բայց գուցէ ոչ մի այնքան սիրելի եւ պաշտելի՝ որքան մերս Չապել, ժամանակակից եւ նման մաքրութեամբ վարուց՝ իր անուանակցին Ս . Իգապելի՝ քրոջ Ս . Լուդվիկ թագաւորին Փռանկաց: Չապել առաջին է այս անուամբ ի մէջ ազգակցացն, առաջին բարձր թագաւորական պատուովն, եւ առաջին գեղեցիկ վարութն եւ սրբութեամբ, հռչակաւոր՝ նաեւ քաղաքական կենաց դիպուածովք: Եւ ինչպէս մէկ հատիկ Տիգրանուհի ի մէջ հայկազուն թագուհեաց մերոց, մէկ հատիկ Սաթենիկ կամ Ս . Աշխէն Արշակունեաց մէջ, կամ Կատրամիդէ եւ Խոսրովանոյշ ի Բագրատունիս, Ռուբինեան հարստութեան մէջ այլ մէկ հատիկ Չապել թագուհի . մանաւանդ թէ բոլոր մեր ազգին պայազատաց մէջ՝ սա մէկիկ թագաժառանգ աշխարհատիկին եղաւ . ոչ թագաւորի կին ըլլալովն՝ կոչեցաւ թագուհի, այլ իր ամուսինն իրմէ կոչեցաւ թագաւոր: Իրմէ առաջ՝ օտար պատմիչք կու յիշեն, (եւ դրամն այլ կու վկայէ) որ Երատոյ անուամբ Հայոց իշխեցող թագուհի մը եղած է, Քրիստոսի յաշխարհ գալուն տարիները, իբրեւ կին եւ քոյր Տիգրանի, բայց անունն եւ համբաւն իսկ անձանօթ է մնացեր իր ազգին:

Ա

Չապել իր տկար սեռով, փափուկ հասակաւ, հեղուկ սրտովն, նոր թագաւորութեամբ ձեւացեալ ազգի մը՝ կէս ինքնագլուխ եւ պայազատօրէն վարող բերդատէր իշխանները միացընելու, եւ Հայոց մանաւանդ այնպիսի ժամանակի Հայոց ազգավար ըլլալու, երթէ անկարելի անձ մը եւ բան մը կ'երեւէր . եւ սակայն վերին ազգախնամ տեսչութիւնն, փորձ եւ կտրիճ իշխանի մը (Կոստանդնի) քաղաքագիտութիւն, եւ մեծ ու հասարակաց երախտաւոր ու

պատկանելի թագաւորի մը (Լեւոնի) կամք, որ իր դեռաբոյս դստրիկը կտակաւ տիկին կարգեց իր 34 տարի արեան քրտամբք խնամեալ ազգին եւ քսանամեայ պայծառացեալ թագաւորութեանն, կարողացուցին այս բանս . եւ եղաւ Ջապել առիթ հանգստեան Հայոց նորաթագ հարըստութեանը, որպէս եւ իր անարատ վարքովն՝ ըստ անուանն ստուգաբանութեան՝ Աստուծոյ հանգիստ (Էլի սաբէթ՝ հրէարէն): Մեր պատմութեան, եւ մասնաւորապէս Ռուբինեանց միջոց:

Ջապել ազնիւ եւ գեղեցիկ գոհար մ'երեւցաւ, բարձր գլխոյ եւ բարձր բաղդի մը սահմանուած, եւ իբրեւ այսպիսի գոհար, (եթէ կրնամ ըսել, լուսափայլ՝ դեռ չբանուած իսկ, դեռ նոր գտուած) անկարելի այլ էր որ բազմաց բաղձալի, ակնունելի եւ հակառակելի չըլլար, եւ կրնայ քաղաքական մտօք յարմարուիլ Ջապելի վրայ՝ ինչ որ թէ՛ նոյն թէ սրբազան մըտօք ըսաւ մեր հոգերգակ հայրապետն՝ Հռիփսիմէի համար .

«Ի վերայ միոյ պատուական մարգարտի

Խաղացին ցընծալով ամենայն (հեթանոսք):

Արեւմուտք՝ յարեւելս ընթացեալ հասին

Քարոզել յայտնապէս ըզչքնաղ տեսութիւնն:

Լրւան թագաւորք եւ լըցան խնդութեամբ .

Որսալ յանձն առին ըզգաղտնի մեծութիւնն .

Պարգեւել իրերաց խոստանային բանիք,

Եւ ծածուկ հընարիւք՝ գողանալ ի միմեանց»:

Ջապելի այսպիսի բաղդի ենթակայ ըլլալը իմանալու համար՝ բաւական չէ գիտնալն որ Հայոց առաջին եւ անուանի թագաւորի մը դուստր է, եւ ոչ թէ միամօր դուստր այլ, կամ հրատարակեալ ժառանգ Լեւոնի . այլ հարկաւոր է եւ գիտնալն թէ ի՞նչպէս այսպիսի մեծ ժառանգութեան սահմանեցաւ, եւ ի՞նչպէս հասաւ ի նոյն: Իր մեծասիրտ հեռատես եւ խորատէտ հօրն գլխաւոր հոգոց եւ գործոց մէկն

Էր այս . Լեւոն՝ ոչ միայն Ռուբինեան թագաւորութեան հեղինակն եղաւ, այլ եւ պահող, գորացընող ու հռչակող հայրենի տէրութեանը, յորում եւ յաջողեցաւ անհուն ջանքով, կտրճութեամբ, երկայնամտութեամբ եւ բարակ քաղաքագիտութեամբ մը, որով գերազանցեց քան զամենայն Հայպետս, եւ քան զչատս յազգապետաց օտարաց: Գիտես, Հայկակ, որ իր նախորդքն ամբողջ դար մը ո՞րչափ աշխատեցան իրենց բոյնը հաստատելու Տորոսի ժայռերուն վրայ, պաշտպանելով ի Յունաց եւ ի Սելջուկեանց . ո՞րչափ կըռուեցան՝ յաղթելով այլ՝ յաղթելով այլ . գիտես, որ իր հայրն՝ Ստեփանն՝ Յունաց կրակով եռացուցած կատասայի մը մէջ խաչեցաւ (յամի 1164 1165) . գիտես, որ իր հորեղբօր (Թորոսի) որդին՝ Բ . Ռուբէն մանուկը, տէրութեան օրինաւոր ժառանգը՝ չարաչար սպաննեցին՝ Հայոց տունը քանդել փափագողք . գիտես, որ իր միւս հօրեղբայրն Մլեհ՝ Հայոց նախատինք եւ աննման անգգամ մ'էր եւ բռնութեամբ յանիրաւի տիրեց կամ նուաճեց աշխարհքը, իբրեւ տասն տարի, մինչեւ յետ անոր մահուն կըրցաւ Լեւոնի անդրանիկ եղբայրն՝ Ռուբէն Գ . պայազատել Հայոց պարոնութիւնը (1175) . բայց ապահով մնալու համար կարօտ էր եղբօրը (Լեւոնի) օգնականութեան: Սա ազատեց զՌուբէն Անտիոքայ դքսին ձեռքէն, որ խաբէութեամբ բռներ եւ բանտեր էր գնա . անոր համար Ռուբէն կրկին երախտապարտ առ Լեւոն, իր տարածամ հիւանդութեամբ ծանրացած ատեն՝ կրօնաւորելով, անոր թողուց տիրական աթոռը (1186), եւ անոր հետ՝ արժանաւոր խրատներ տուաւ՝ չվըստահանալու մեծամտութեամբ իր քաջութեանը եւ հանճարոյն վրայ, այլ եւ մեծ խոհեմութեամբ եւ բարեպաշտութեամբ քաղաքավարելու: Չանաց Լեւոն այս ամեն ձիրքերը յարմարցընելու իրարու, եւ դժուար պարագայից մէջ շատ անգամ յաջողեցաւ քան թէ սխալեցաւ:

Բ

Առաջին դժուարութիւնն ի սկզբան տէրութեանն եւ գրեթէ մինչեւ ի վերջն այլ, իր դրակից եւ համագոր Անտիոքայ դքսին կողմէն էր, որ ինչպէս իր եղբայրկ դաւաճանեց՝ այսպէս իրեն այլ կու դարանէր . երկայն խաղեր խաղաց Լեւոն անոր հետ, եւ եթէ Եւրոպացոց դաշնակցութեան ու երախտեաց պարտքը չունենար, եւ մանաւանդ պատկառանքն ի սրբազան գահէն Հռովմայ, որոյ միջնորդութեամբ այլ իր թագը եւ իր դրօշն ընդունէր էր, թերեւս բոլորովին գինուորական ուժովը վարուէր Անտիոքացոց հետ . բայց հարկ էր երբեմն ուժէն

աւելի խորագիտութեամբ վարուիլ: Այսու մտօք Լեւոնի առաջին խաղն կամ հնարքն եղաւ խնամենալն իր նախանձորդին կամ թշնամոյն հետ, որ էր դուքսն Պեմունդ Գ. որոյ աներձագին դուստրը՝ Իգապելը՝ առաւ ի կնութիւն (1189). իսկ անոր (Պեմունդի) անդրանիկ որդւոյն Ռայիմոնտի կամ Ռեմունդի՝ կին տուաւ (1195) իր եղբօր (Ռուբինի) դուստրը՝ Ալիծ, (որ այրի մնացեր էր ի Հեթմոյ Սասնեցոյ), եւ ասոնցմէ (յԱլիծայ եւ ի Ռեմունդէ) ծնաւ (1196) Ռեմունտ Ռուբէն Բրինձն, որ պիտի ըլլար օրինաւորապէս ժառանգ դքսութեան Անտիոքայ. եւ մայրենի արեամբն՝ անկասկած եւ բարեկամ պիտի պահէր գՀայաստան: Բայց երբ ասոր հայրն Ռայիմոնտ տարաժամ մեռաւ (1200) եւ իր հնգամեայ որդին անուանեցաւ կոմս, անոր հօրեղբայրն Պեմունդ Դ. յափշտակեց՝ ոչ միայն անոր իշխանութիւնը, այլ եւ իր խֆած եւ ապշած հօրը արօռը. (ապշութեանն համար le Bambe կ'անուանէին գնա): Բայց իրաւունքն եւ Լեւոն՝ վոնտեցին զհայրանենգ գահասէրը, եւ դարձուցին ծերը յարօռն, իսկ երբ սա քիչ ատենէն բնական մահուամբ մեռաւ (1201), որդին (Պեմունդ Դ) նորէն իշխանութիւնը ձեռք ձգեց ընդդէմ իրաւանց Ռուբենի Ռեմունտայ: Ահա այս բանիս համար գրեթէ քսան տարի հակառակութիւն եւ կռիւ էր Լեւոնի եւ Պեմունդի մէջ, եւ Անտիոքայ դքսութիւնն տակն ու վրայ եղաւ. իրեք չորս անգամ առաւ Լեւոն գԱնտիոք եւ նստուց իր եղբօր թոռը. Անտիոքացիք երկպառակած՝ ոմանք Լեւոնի՝ ոմանք Պեմունդի կուսակից կ'ըլլային. Լատինք բնականապէս աւելի այս ետքինիս կողմն էին, վախճալով որ չըլլայ թէ բոլոր երկիրն այլ Հայոց թագաւորին իշխանութեան տակ անցնի. մանաւանդ որ Լեւոն արու գաւակ չունելով՝ գՌուբէն անուաներէր իրեն յաջորդ, եւ թագով այլ պսակեր էր գնա (1210): Լատինք մեծ օգնութիւն գտան իրենց Հռովմայ սրբազան քահանայապետը. եւ թէ՛ անոր նամակօք ու նուիրակօք, թէ պատրիարքօք Անտիոքայ եւ Երուսաղեմի, թէ ժողովքով յԱնտիոք, եւ թէ բանադրանօքլու բռնադատէին գԼեւոն թողլու գԱնտիոք ի Պեմունդ. Լեւոն այլ դեսպաններով եւ նամակներով եւ իշխանական ուժով երկար տարիներ դիմացաւ, իր իրաւունքը եւ դաշնագրութիւնը պաշտպանելով. ինչուան որ ուրիշներն այլ ճանչցան գՌուբէն օրինաւոր ժառանգ դքսութեան, եւ բանադրանքը վերուցին ի Լեւոնէ: Այս բաներս գոնէ համառօտիս հարկ է գիտնալ, լաւ հասկընալու համար Ջապելի ապագայ բաղդը, որ կերպով մը այս անտիոքեան խնդիրներէն ծագեցաւ:

Լեւոն թէ իր ըրած ամուսնութեամբն եւ թէ Ռուբէնը որդեգրելովը՝ որչափ որ Անտիոքայ մերձաւորեցաւ, այնչափ այլ ետքի տարիները իրեն զգունի եղաւ այս մերձաւորութիւնը, եւ ամենէն աւելի իր կինն եղաւ իր սրտին վիշտ, զոր թերեւս աւելի քաղաքական տեսութեամբք քան սրտին փափագանօքն առեր էր . եւ չէր այլ ունեցած իրմէ իրեն նման կտրիճ գաւակ մը, ժառանգ իր այնքան աշխատանօք գտած եւ պահած թագին, բայց դեռ նախախնամութեան կամօք վարելով, եւ Ռուբէնը իրեն յաջորդ ընտրելով՝ գոհութեամբ կ'ապրէր: Սակայն երբ յետ իբր քսան տարւոյ (1206) կենակցութեանն՝ ծանր ամբաստանութիւն լսեց թագուհոյն վրայօք հաւատարիմ անձէ, թերեւս իր ազնուական չափէն այլ աւելի դուրս ելնելով եւ պատժելով զկինն՝ բանտարգել ըրաւ ի Վահկա բերդի . եւ անկէ ունեցած մատղաշ աղջիկը՝ յանձնեց իր մօրը՝ Ռիթա տիկնոջ, որ դեռ ողջ էր, եւ որոյ անուամբ կոչէր էր դուստրն այլ: Մեր պատմիչք զսա միայն յիշեն գաւակ Լեւոնի . բայց օտարք անուանեն նաեւ զՍտեֆանիա՝ կամ Եսթեֆեմի (Estephemie) դուստրն այլ զոր տուաւ ի կնութիւն քաջին Յովհաննու Պրիենայ Երուսաղեմի թագապահին կամ թագաւորին: Իգապելի վերջն ինչ եղաւ՝ անյայտ է . հաւանօրէն քանի մը տարիէն մեռաւ յարգելանին . եւ Լեւոն երկրորդ ամուսնութիւն ըրաւ, երթալով ի Կիպրոս առ (թագաւորն Հիւկ') որդին Ամաւրեայ, եւ առնլով (1210) ի կնութիւն, հաւանութեամբ Ս . Պապին ասոր մատաղ օրիորդը՝ Սիպիլ, որ էր ըստ մեր ժամանակագրին (Սմբատայ) ,Կին իմաստուն եւ համեստ»: Ասկէ՝ Լեւոնի ծերութեան ծիրանի ծաղիկ ընծայեցաւ մէկհատիկ աղջիկ մը, ԶԱՊԵԼ, յամի 1216:

Գ

Զապել իր ծերունի հօրը խոնարհած արեւուն յանկարծափայլ լոյս մը, նոր յոյս մը բերաւ: Լեւոն նոյն տարին արդէն անգամ մ'այլ Անտիոքայ տիրեր եւ հաստատեր էր հոն զՌուբէն . բայց երբ նա նորէն հալածուած ի Պեմունդայ՝ դիմեց առ հայրագիր եւ պաշտպանն իւր, Լեւոն՝ արդէն ձանձրացեալ, ծերացեալ եւ հիւանդ, յայտնի տեսնելով որ եթէ Ռուբէն ինքն իրեն կարող չէ աթոռը պահելու, անով Հայոց գահուն այլ վնասաբեր պիտի ըլլայ, ոչ միայն վերջի անգամ (1219) չօգնեց անոր, այլ եւ մերժեց իր աթոռոյն յաջորդութենէն այլ, կտակը փոխեց, եւ իր ստացուածոց ու թագին ժառանգ անուանեց, (երոպական օրինաց հետեւելով) իր նորընծայ Զապել դստրիկը, իբրեւ նախախնամութենէ պարգեւեալ պայազատ

մը: Իր վերջի տարիները՝ երբ ձեռքի եւ ոտքի յողացաւութեամբ տանջուելով՝ չէր կրնար կատարել իր քառասուն տարի ըրած առիծական արշաւանքները, եւ ոչ արծուի պէս ճանկերը ձգել լեռնէ լեռ, բերդէ բերդ, իր ընդարձակած երկրին սահմանակից հակառակորդաց վրայ, դեռ երբեմն մոնչալովը կը վախցընէր զանոնք . զօրքն ու զօրավարները կու դրկէր կամ յօգնութիւն նեղելոց եւ կարօտելոց, կամ ի հալածել զթշնամին . եւ եթէ սա զօրացեալ՝ զիրենները քշէր ու վտանգէր, Լեւոն երկաթի տեղ ոսկի սփռելով՝ կու հեռացընէր վտանգաւոր մերձաւորը եւ կ'ազատէր իր գերելեալ զօրքն եւ իշխանները: Այսպէս այլ ըրաւ յամի 1217, երբ Իկոնիոնի Ազգէտին Քէյքաւոս սուլտանն պաշարեց զԿապան բերդն, եւ գերեց Լեւոնի գլխաւոր զօրավարները, որ Էին մեծ իշխանն եւ պայլն Սիր Ատան, եւ Կոստանդին գունդստապլ (սպարապետ), իր (Լեւոնի) քեռոյն որդին՝ Պապեռն բերդին տէրն, ի ցեղէ Հեթմեանց: Լեւոն գերեթափ ընելով զԱտան եւ զԿոստանդին՝ բոլորովին երախտապարտ եւ անձնանուէր ըրաւ զանոնք . «զի լաւ է թագաւորի աղէկ ճորտ պահել՝ քան զայլ հարստութիւն»:

Այսպիսի աղէկ եւ հաւատարիմ ճորտերու վրայ վստահացեալ եւ զանոնք իր զակին խնամակալ կարգելով՝ իր դեռակայծ դստեր լոյսը պայծառացեալ կու տեսնէր . եւ իր ծանրացած սեւցած թեւերուն վրայ թրթռացընելով այն ճերմակ փափուկ ձագը՝ կու յուսար թէ անով նորոգուի իր արծուային մանկութիւնն այլ . անով կարենայ կամ նոր որսեր ընել կամ հիները պահել: Միայն կու մնար անոր արժանաւոր վարուժնեակ մը գտնել, արժանաւոր լծակից մը, որ թէ՛ իր, թէ անոր, եւ թէ Հայոց բաղդը հաստատէ: Բայց Չապել շատ դեռաբոսիկ էր . Լեւոնի յողացան այլ չէր յուսացընէր զանիկա չափահաս տեսնելու . սակայն անոր համար այլ աւելի կու հոգար կու մտածէր . եւ իր անգին գոհարը (դուստրը) զգուելով, միտքը պալատէ պալատ, արքունիէն արքունիք կ'երթար, Չապելի փեսայ մը, Հայոց իշխան եւ իրեն գահակալ մը գտնելու, մինչդեռ այն հոգած մտած վրայ եւ յօգնաց ձեռաց մէջ՝ Չապել անհոգ եւ անգէտ կու ծաղկէր կու ծիծաղէր, կու բացուէր գոցուէր, ժայռերու եւ հեղեղոց եզերք բուսած նունութարի մը նման:

Սուլտանին ի Կիլիկիա ասպատակած տարին՝ (1217) յԵւրոպիոյ բազմութիւն Խաչակիր զօրաց եկան նորէն զԵրուսաղէմ ազատելու, յետ երեսնամեայ գերութեանն ի Սալահէտտինայ . Լեւոն անձամբ չկարենալով երթալ՝ զօրք

տուաւ իր աներձագին՝ Կիպրոսի Հիւկ թագաւորին, որ եւ գնաց ի Թափոր եւ ի Պտղամայիս, եւ ԽԱՀակրաց կանուխ հասան գնդից հետ քաջութեամբ գործ տեսաւ: Այս յառաջապահ գնդից գլխաւորն եւ ամենէն կտրիճ իշխանն՝ Էր Մաճառաց թագաւորն Անդրէաս Բ. . որ մեծ համբաւ այլ հանեց . բայց իր երկրին շփոթութեանը համար՝ ստիպուեցաւ շուտով հոն փութալու . ի դարձին եկաւ յԱնտիոք, (որ այս ատենս այլ Ռուբենի ձեռքն եղած կ'երեւի): Լեւոն՝ որ ամեն բան կու գիտէր կ'իմանար, հաւատարիմ դեսպան մը խաւրեց առ Անդրէաս, եւ դաշամբք խօսեցան որ անոր համանուն որդին Անդրէասը՝ պսակեն Չապելի հետ . թէպէտ եւ դեռ երկուքն այլ բաւական տարիք չունէին, վասն զի Անդրէաս այլ հագիւ 8 տարուան կրնար ըլլայ: Ունկարաց հին արեւելեան արիւնր յարմարագոյն սեպեց Լեւոն իրենին հետ խառնել, անոնց թագաւորին այլ ասկէ հաճոյ անակնկալ օժիտ չէր կրնար ըլլալ՝ իր որդւոյն համար, զոր յանկարծ Հայոց թագաւոր պիտի տեսնէր: Այս բանիս համար Անդրէաս գոհութեամբ թողք մը գրեց (ի մարտի 1219 տարւոյ) առ պապն Ոնորիոս, իմացընելով Լեւոնի հետ ըրած խնամեխօսութիւնը, եւ տնօրինումն խնդրելով որդւոյն համար, միանգամայն եւ աղաչելով որ ինքն քահանայապետն յանձնէ գնա Տաճարական եւ Հիւրընկալ ասպետաց՝ խնամակալ ըլլալու տղային՝ յետ մահուան Լեւոնի:

Բայց այս գործս չյաջողեցաւ, վասն զի Լեւոն շուտով մեռաւ նոյն տարին (1219) եւ Անդրէաս թագաւորն զբաղած էր ի Կալիցիա՝ հոն թագաւորեցընելու իր երկրորդ որդին . եւ ինչուան որ հոս բաները ուղղեց: Հայք ուրիշ ընկեր գտան Չապելի . մանուկն Անդրէաս այլ Վենետիկցի օրիորդ մ'առնելու բաղդ ունեցաւ: Այսպէս գուր եղաւ Չապելի առաջին փափագողին ականկալութիւնը, թէպէտ եւ կ'երեւի՝ թէ Լեւոն այլ նոյն յուսով մեռաւ, նորէն յանձնելով զՉապել՝ կաթողիկոսին եւ իր հաւատարիմ իշխանաց, եւ գլխաւորապէս Ատանին, զոր եւ պայլ գրեր էր, այսինքն իբր խնամակալ տէրութեանն եւ հայրագլուխ (աթաբէկ) իր դեռահասակ ժառանգին:

Դ

Չապելի խնամակալութեան տակ եղած ժամանակն՝ որ եօթն ութ տարի քշեց, շատ դժուարակնճիոն եղաւ . եւ իրեն փոքրիկ սրտին այլ ոչ փոքր վախեր եւ ցաւեր բերաւ . որոց առաջինն եղաւ կորուսանելն իր հայրագիրը, որուն ձեռքէն

հագիւ վարժեր էր ծնողական խնամք ընդունիլ: Ատան պայլ օր մը Սսայ Ս . Պարսամ եկեղեցին երթալու ատեն շատ չբանուկ ճամբէ մը, Իսմայելացոց կամ Հաշիշի աւագակաց սրի տակ ընկաւ, որոց սատանայական պաշտօնն էր յանկարծ հասնիլ իշխողաց վրայ եւ սպաննել: Ատան՝ Լեւոնի հագարապետն եւ երբեմն սպարապետն ըլլալով՝ անշուշտ այլագգեաց ատելի էր: Իշխանք Հայոց անոր տեղ հաւանեցան պայլ ճանչնալու Լեւոնի համշիրակը, գԿոստանդին գունդստապլն, զոր արդէն երկրորդ խնամակալ գրեր էր Լեւոն, այս անձս որ 50 տարւոյ չափ Ռ-ուրինեան տէրութեան նեցուկ եւ գրեթէ կառավար եղաւ, այս ժամանակիս ամենէն նշանաւոր անձն էր, ամենայն բարեմասնութեամբք եւ յետ Լեւոնի մեծի՝ առաջին մեծ մարդ կրնայ ըսուիլ բոլոր մնացեալ տէրութեան ժամանակին . ցեղով, ինչպէս առաջ յիշեցի, ի Հեթմեանց էր, որ թշնամիք էին Ռ-ուրինեան տանը . բայց սա ցեղին կրսեր ճիւղէն էր, որոյ անդրանիկն՝ Տարսոնի եւ Լամբրոնի տէր ըլլալով՝ հակառակ էր Ռ-ուրինեանց . իսկ այս ճիւղս Պապեռոնի եւ ուրիշ բերդերու ժառանգ՝ Լեւոնի հօր հետ խնամութեամբ միաբան եւ հաւատարիմ եղաւ Ռ-ուրինեանց . Կոստանդնի անձնական արդիւնքն այլ հասուց զինքը այս բարձր աստիճանին, ուր կրցաւ այլ ամուր եւ փառաւոր կենալ հնարագէտ խելքովն, զորութեամբն եւ բարեկիրթ որդւոց օգնութեամբ: Այսպիսի գօրաւոր եւ բանգէտ անձի մը դէմ կենալ կամ հնարել՝ շատ դժուար էր, եւ ով որ փորձեց՝ մեծապէս վնասեցաւ . եւ նախ Բրինձն Ռ-ուրէն Ռ-եմունտ:

Սա հալածուած յԱնտիոքայ, մերժուած իր բազմերախտ մեծ քեռիէն, մինչդեռ տարակուսեալ կու մտածէր՝ վրայ հասաւ Լեւոնի եւ յետոյ Ատանայ մահն, Ռ-ուրէն՝ մէկ իշխանութենէ գրկուած՝ աչքը երկուքի դարձուց, որոց ատենօր իրաւամբ այլ կրնար յուսալ . իսկ հիմայ թէ ոչ գօրութեամբ հին կտակին Լեւոնի՝ գոնէ ազգականութեամբն եւ խնամութեամբ, (վասն զի Չապելի մօրքոյրն էր իր կինն այլ) եւ Հայոց ու Լատինաց լեզուին եւ սովորութեան վարժութեամբն՝ վստահացաւ խնդրելու Հայոց թագաւորութիւնը: Բայց Լեւոնի կամքն եւ Կոստանդնի վախն հեռացուցին զնա . սակայն տարաբաղդ երիտասարդն՝ չէր կրնար շուտով մօռնալ որ տասն տարի առաջ Լեւոնի հետ թագակից եւ ձիակից՝ Հայոց հանդիսական տօնից հաղորդ կ'ըլլար . եւ շատեր կային՝ որ ոչ միայն զինքը ճանչցեր էին յաջորդ Լեւոնի, այլ թերեւս եւ հիմայ այլ չհակառակէին, այն ատեն՝ դեռ պատանեակ, հիմայ իբր 25 տարւոան կտրիճ ասպետ մը, Հայոց եւ Անտիոքայ եւ Խաչակրաց նշաններով զարդարուած, իր ամենէն վառվռուն եւ

յուսագին կենաց ատեն, յէր կրնար այնպիսի մեծ փափագէ մը յետ դարձընել սիրտը . խնդրանօք չկրցածը՝ ուզեց փորձել ուրիշ հնարքով, նաեւ զինուոց զօրութեամբ:

Այն ատեն (1219 20) Խաչակիրք առաջնորդութեամբ Յովհաննու Պրիենայ՝ Երուսաղեմի թագաւորին՝ եկեր պաշարեր եւ ատեր էին գՏամիադ . հոն էր Պապին նուիրակն այլ՝ Պելագիոս ծիրանաւորն, որ իբրեւ փոխանորդ քահանայապետին՝ կ'ուզէր Խաչակրաց գլուխ այլ սեպուիլ եւ հրամայել: Ասոր դիմեց Ռուբէն, եւ գտաւ օգնութիւն ստակի եւ զօրաց . Խաչակիրք Տամիադայ առնամբ հպարտացած եւ չփացած անհոգ կեցեր էին . դիւրին էր ասոնցմէ ժողովել գունդ մը բաղդախնդրաց, եւ նոր տեղի մը ձեռք ձգել: Այսպէս այլ եղաւ, Ռուբէն յանկարծուց գնդովն եկաւ ի Կիւիկիա, մտաւ ի Տարսոն, եւ առանց ընդդիմութիւն գտնելու հոն, (ուր որ միշտ Լեւոնի ցեղին հետ սերտ բարեկամութիւն չէր եղած), իշխեց ինքզինքը Հայոց թագաժառանգ անուանել, եւ գտաւ կուսակից այլ զինքն այնպէս ճանչցնելու: Ասկէ քաջալերուած՝ առաջ անցաւ՝ ձեռք ձգելու ուրիշ քաղաքաց եւ Լեւոնի թագին վրայ . բայց զգաստն Կոստանդին հաւատարիմ գնդով մը յանկարծ վրան հասաւ՝ Մամեստիոյ կողմերը . անոր կուսակիցները շարդեց ցրուեց, զինքն այլ բռնեց բերաւ իրեն ապաստան կարծած Տարսոն քաղաքը, եւ շղթայակապ բանտարգել ըրաւ: Թշուառ երիտասարդն անյոյս ի Հայոց եւ յԱնտիոքայ, դեռ կու յուսար Խաչակրաց եւ Քահանայապետին օգնութեանը, եւ սա յիրաւի հարաբար խնամելով եւ ճանչնալով զնա օրինաւոր տէր Անտիոքայ՝ գրով յանձնեց առ նախայիշեալ նուիրակն՝ որ հոգ տանի անոր ազատութեան, եւ անօգնական չթողու անոր կինը եւ երկու աղջիկները . նուիրակն կրցած ջանքն ըրաւ, նգովեց զԱնտիոքայ բռնաւոր դուքսը, եւ Տաճարական ասպետաց յանձնեց առնուլ քաղաքը, որով թերեւս յոյս ըլլար Ռուբենի գոնէ նորէն հոն դառնալու, բայց նա ողբերգական վախճան մ'ունեցաւ, բանտին, եւ աւելի սրտին նեղութենէն՝ երկու իրեք տարիէն՝ իր դալար արեւովն ու ամեն յոյսերովն մարեցաւ, մեռաւ: Հայոց թագն իրեն համար չէր, եւ ոչ այլ իրեն պէս ուրիշ մերձաժառանգ ակնկալուի մը, թէ եւ աւելի այլ արժանաւոր անձն:

Այս երկրորդ կամ երրորդ (յետ Անդրէի եւ Ռուբենի) ակնկալուն՝ եղաւ նախայիշեալ թագաւորն Երուսաղեմի Յովհաննէս Պրիէն, պատճառաւ կնոջն

խնամութեան, այս կտրիճ, զգոն եւ արդէն տարիքն առած մարդն, որ մեծ անուն ունէր Եւրոպացոց առջեւ, եւ դեռ նոր Տամիրադն առնելով՝ այլ ամէլի հռչակուած էր, իր ժամանակին բաղդախնդիր, նաեւ բաղդակորոյս եւ բաղդագիտ գլխաւոր անձն այլ կրնայ ըստիլ . եւ ըստ այսմ՝ քաջութիւնն եւ ուրիշ ձիրքերն կու մթանան: Լսելով Լեւոնի մահը եւ Ռուբենի հանդիպածը, իրեն յարմար սեպեց ժառանգութիւնը . այս մտքով ելաւ Տոմիադէն եկաւ ի Պտղոմայիս (Աքքեա), ու պահանջեց Հայոց թագը: Այսպիսի մեծ եւ զօրաւոր անձի դէմ կենայն դիւրին չէր, բայց որովհետեւ կնոջն իրաւամբք եկեր էր, Կոստանդին այլ նովին իրաւամբ պահանջեց իրմէ՝ որ զկինը՝ (որ էր համահայր քոյր Չապելի) հետը բերէ: Յովհաննէս դարձաւ իր կարծեցեալ թագաժառանգին, եւ հիւանդ գտաւ զնա, որ եւ քիչ ատենէ մեռաւ . 15 օր վերջը իր մէկհատիկ չորս տարուան մանչ գաւակն այլ մեռաւ: Սրբազան քահանայապետն Ոնորիոս այլ խրատ եւ բանադրանք գրեց Յովհաննու՝ եթէ Հայոց հետ պատերազմի անոնց թագաւոր ըլլալու համար: Ամեն կողմէ Յովհաննիսի հայկական ակնկալութիւնն փճացաւ . անոր վրայ շատ չանցաւ՝ Երուսաղեմի թագաւորութիւնն այլ կորուս, եւ անոնց տեղ գտաւ Կոստանդնուպօլսոյ կայսրութիւնը (1231), ու յունական թագով մխիթարուած մեռաւ (1237):

Ե

Չապել՝ առանց իր գիտնալու այս յափշտակիչներէն ազատելով, պէտք էր որ շուտով ապահովուէր նոր ակնկալութիւնէ . եւ թէպէտ Կոստանդին ամենայն արթնութեամբ կու հսկէր, բայց երկար տարիներ այլ անխռով մնալու չէր յուսար, ուստի Չապելի չափահաս տարիքին չկարենալով սպասել, գոնէ խելահասութիւնը տեսնելով, երբ եօթն տարեկան եղաւ՝ ի ժողով կանչեց ազգին գլխաւոր իշխանները, պաշտօնեայքը, զօրապետները եւ եկեղեցականքը, եւ ըսաւ (ըստ պատմելոյ իր որդւոյն՝ Սմբատայ սպարապետի եւ ժամանակագրի) «Պարոնայք, դուք գիտէք թէ յի՞նչ նեղութեան գտի զաշխարհս, ու զմեր Պարոնին (Լեւոնի) յետամնացքն . ու Աստուծով ինչո՞ւ ի յայս բերի . ու մեր Պարոնի դուստրս՝ կարգման եղաւ . ամենդ թատպիրուեցէք (պատրաստուեցէք) որ մեզ Պարոն բերենք, զի ես ուզեմ որ իմ տան եւ իմ որդւոցն անդորրութիւն առնեն» . այսինքն, Չապելի փեսայ մը բերենք՝ որ ես պայլութեան հոգէն ազատած՝ իմ տունս հոգամ: «Նա ամենն թատպիրուեցան շատ օրեր, եւ հայնց պատեհեցին

(պատշաճ տեսան՝) որ քան յայլ տեղաց՝ բերեն պարոն Ալոզին գԱնտաքայ Բրնձին որդին՝ գՖիլիպն . զի ի մօտս է, եւ լաւ կարէ օգնել մեզ ի մեր ամեն կարիք»:

Այս Անտիոքայ Բրինձն կամ իշխանն էր ծանօթ Պենունդ (կամ ըստ ոմանց Բենունդ) Դ . Շիլ կամ միականի կոչուած՝ (Le Borgne), որ այնչափ վիճից պատճառ եղաւ ընդ Լեւոնի եւ իր եղբոր թոռին Ռուբենի . ի վերայ այսր ամենայնի մեր պարոնայքն շատ օրեր մտածելով՝ քան զամենքն պատեհ գտան իրենց պարոն բերելու անոր երրորդ որդին՝ Փիլիպպոսը, որ իբրեւ 17 տարուն պատանի մ'էր . եւ արդէն մօր կողմանէ խնամի էր Հայոց եւ տեղեակ անոնց սովորութեանց, կու յուսային որ իր հօր եւ հանգուցեալ աներոջ մէջ անցածները գիտելով՝ իրենց վրայ երախտապարտ ըլլայ, եւ հլու հաւատարիմ մնայ իր նոր հայրենեաց օրինաց: Այս բանս ապահովելու համար՝ հաւատարմութեան խօսք եւ երդումն այլ պահանջեցին իրմէ . ,Բերին ի պոման (պայման) որ հայենակ կենայր, ,ու գեկեղեցին եւ գսեղանն հայենակ տանէր . եւ զամեն մարդ յիւր իրաւունքն պահէր», Այսինքն, եկեղեցական եւ արքունական հանդէսները՝ հայկական ծիսով վարէ, եւ զամենքն իրենց իշխանութեան եւ իրաւանց մէջ պահէ: Ապա (1222) մեծ հանդիսի պսակեցին անոր հետ զօրիորդն Ջապել, որ իբրեւ քոյրահարսն փեսային եւ թագուհի Հայոց եւ միամիտ աղանի՝ չորս տարի այլ հօրը արքունի դարպասին եւ առագաստին մէջ կու ճեմէր, դեռ իր խնամակալ եւ հայրանախանձ Հայ իշխանաց հսկողութեան տակ . եւ շատ բարեբաղդ եղաւ ընտիր դաստիարակներ ունենալու թէ յիւրոցն եւ թէ ի Փրանկաց, միտքը եւ հոգին կրթելու, եւ իր բարձր վիճակին յարմար ստացաւ ի կուսական հասակին՝ սիրտ մայրենի, աղքատաց եւ կարօտելոց համար, ճաշակ եւ սէր իմաստութեան եւ գիտութեանց, եւ ամենէն աւելի՝ բարեպաշտութիւն, համեստութիւն եւ աստուածսիրութիւն:

Աշխարհն՝ իրեն տիկնութեան, փեսայն՝ հարսնութեան, երկինք՝ ազգին մայրութեան կու պատրաստէին գնա . ինքն դեռ արտաքին փառաց անհմուտ՝ միայն պարկեշտութիւնը գիտէր գեղեցկագոյն զարդ . եւ կարծէր թէ այնպէս կուսախառն կենակցութեամբ ապահով պիտի մնայ իր պսակակցին հետ:

Բայց թե իր եւ թե հասարակաց կարծիքն խաբուեցաւ: Փեսայն Փիլիպ յառաջ քան առ հարսնն՝ անարժան գտուեցաւ առ աշխարհն՝ որոյ թագովն պսակուեր էր: Առջի իրեք տարին վախով եւ զգուշութեամբ քաղաքավարելով՝ երբ ուժովցաւ քսանամեան եռանդով եւ համարձակութեամբ, սկսաւ ինքն իր խելքով վարուիլ, մանաւանդ թե հօրը խելքովն, որ ոչ այնքան որդեսիրութեամբ՝ որքան շահասիրութեամբ՝ պղտորեց անոր միտքը, եւ սկսաւ սա պաղիլ Հայոց սովորութենէն, եւ ,հօր հօրն թապտրով կ'ուզէր որ ձգէր զՀայոց գամեն իշխանքն, եւ յիւրոցն դնէր» . Հայ պաշտօնէից տեղ՝ Փրանկ մտցընել, եկեղեցոյն եւ սեղանին ծէսը փոխել, Սիսէն աւելի Անտիոքայ մօտենալ: Իշխանք խրատեցին գնա, բայց նա իր հօրմէն մոլորած՝ ոչ միայն ճամբէն չդարձաւ, այլ եւ գաղտուկ հօրը խաւրեց Հայոց արքունի գարդերը, եւ մանաւանդ Լեւոնի մեծածախ շինած պալատածէւ վրանը, զոր մեծ հանդիսի օրեր կու կանգնէին: Եւ ոչ այնքան երդմունքէն՝ որքան Հայոց վրէժխնդրութենէն վախելով՝ ուզեց ինք զինքն այլ փախցընել իր հայրենիքը: Գաղտուկ զԶապել հետն առած ճամբայ ելեր եւ հասեր էր ի Թիլ Համտընոյ՝ Զահան կամ Ճիհուն գետոյն քով: Կոստանդին կտրիճ զինուորներով հասաւ ետեւէն, զիշերանց դարանելով պաշարեց զբերդը, եւ ներս մտաւ անկարծելի ատեն . մինչդեռ յօգնութիւն, քուն եւ սէր մեծագոյն խաղաղութեան եւ երջանկութեան մէջ կու կարծեցնէին ծաղկահասակ ամուսինքը, յանկարծ գամենն այլ ընդհատեց, խռովեց, հալածեց . եւ ի~նչ անդարձական հալածանք . երկաթեղէն ձեռօք առագաստին միջէն յափշտակեց զՓիլիպ, երբ զարհուրեալ եւ կիսամեռիկ լծակիցն Զապել՝ դողդրդալով լալով, եւ երեսները ցըտելով՝ հագիւ կրցաւ կանչել «Վա՛յ տէր, վա՛յ տէր», ձեռուրները դէպ ի գրկէն փրթած փեսայն կարկառելով . մինչդեռ անգութ յափշտակողքն՝ անոնց կաթոգին կապերը իսպառ կտրելով՝ յանցաւորաց կապանօք պրկեցին զՓիլիպ, եւ խուլ ականջով՝ ելան քշեցին գնա մինչեւ ի Սիս, ուր եւ բերդարգել ըրին, իբրեւ մատնիչ ազգային իրաւանց եւ երդմնագանց: Լուր խաւրեցին Անտիոքայ Բրնձին այլ՝ որ յետ դարձնէ Հայոց գանձը, եւ գորդին ազատէ, իսկ չիլ եւ շուար հայրն՝ Հայոց ոսկոյ եւ արծաթին հետ կու կշռէր որդոյն սէրը: Առջի բերան, քիչ մ'այլ վախէն լռեց, որ չըլլայ թե Հայք դեռ կրից տաքութեան մէջ ըլլալով անոր կենացն այլ վնաս հասցընեն . ատեն անցնելէ ետեւ դեսպաններ աղաշաւորներ խաւրեց որ գոնէ միայն արձրկեն, իրեն խաւրեն որդին, խոստանալով բոլորովին հրաժարելու յիրաւանց թագաւորութեանն Հայոց: Ի~նչ դժուարակնճիոն եւ ողբերգական խնդիր, թագէն հրաժարելն թերեւս ըլլար դիւրին, բայց ի՞նչպէս

հրաժարել Ջապեյի սրտէն, որ եւ անխարդախ սիրէր իր վարուժանը: Երկու տարւոյ չափ տեւեց այս խղճալի վիճակն: Պէ մունդ տեսնելով որ դեսպանութեամբ բանն առաջ չ'երթար, անձամբ եկաւ ի Համտուն, աղաչելու գիշխանս Հայոց, գիշանելով զանոնք գոհ ընելու եւ փրկանաւորելու թշուառ գաւակը: Հայք չկրցան չէ ըսել՝ թող տուին որ մարդ գրկէ իմացնելու որդւոյն: Ափսո՜ւ, շատ ուշ . կամ նենգութիւն կամ սրտնեղութիւն արդէն ազատեր էին գՓիլիպ... ի կենաց: Պատգամաւորքն լուր բերին թէ դեռ նոր՝ քանի մը (տասն) օր առաջ Փիլիպպոսի դաւար արեւն բանտին մթութեան եւ տխրութեան մէջ մարեր էր (1225), ի պատիժ՝ իրմէ աւելի՝ իր անգգաստ հօրը, ի վրէժ ազգային հայենակ իրաւանց, բայց եւ ի փուշ փափուկ սրտին Ջապեյի: Ջապեյ հիմայ զարգացեալ՝ սկսեր դր գգալ իր վիճակը եւ պարտքերը, աչքին դիմաց սարսափելով տեսեր էր իր կողակիցը՝ զինեալ եւ զայրացեալ մարդկան ձեռք ընկած . եթէ ազգին իրաւանց դաշողին չէր կրնար պաշտպան կենալ, միթէ իր կենակցին եւ թագակցին բարեխօս ըլլալու իրաւունք չունէ՞ր: Կ'իմանար՝ որ իր տկար հասակն խաղալիկ կ'ըլլայ բաղդին եւ շատերու բաղդի . բայց դեռ ամեն փափագովն այլ չկարենալով իր աղաւնոյ սահմանէն վեր թռչիլ՝ լռիկ սիրտը դրած կու դադրէր:

Զ

Ազգանախանձ պարոնայքն Հայոց՝ երկրորդ անգամ պայլ դրին գԿոստանդին, որ ֆութացաւ Փիլիպպոսի կողմնակից իշխանները ցրուել . եւ անոնցմէ 28, կամ ըստ ոմանց 70 հոգի բռնեց, կամ սպաննեց կամ վորնտեց կամ նուաճեց: Տարի մ'այլ արթնութեամբ կառավարելէն ետեւ, իր անուանակից Կոստանդին կաթողիկոսը եւ մեծ իշխաններէն մէկ քանին հաւանեցուց՝ որ Ջապեյը հարսնացընէ իր որդւոց մէկուն, որպէս զի ինքն այլ հայրաքար պաշտպանելով՝ ամեն փորձանքէ ազատ պահէ զթագն եւ զթագուհին Հայոց: Եթէ փառասիրութենէ ազատ այլ չէր այս խորհուրդս, սակայն իրմէ արժանաւոր մարդ այլ չկար Ջապեյի սկեսրայր ըլլալու, ոչ որ իշխեց ձայն հանելու, եւ ոչ որ յետոյ գոջացաւ: Ինքն Լեւոնի համշիրակ, որդիքն այլ նոյնպէս էին Ջապեյի, եւ գրեթէ մէկտեղ մեծցած . ասոնցմէ փեսայացունէր ՀԵԹՈՒՄ, երրորդ որդին Կոստանդինի, իբրեւ 15 տարեկան, ,Մանուկ տիօք, առոյգ մարմնով եւ գեղեցիկ տեսանելով» . ըստ ասելոյ ժամանակակից պատմչին . (Կիրակոսի), եւ ըստ ականատեսին (Վարդանայ) ,մեծահոգի եւ հանճարեղ պատանեակ, որ էր անձնեայ եւ թիկնեղ

եւ գեղեցկագիտակ երիտասարդ»:

Այս վայելուչ եւ հաճոյական ձիրքերն՝ եթէ օտարաց անտարակոյս գրաւ մ'էին աշխարհքին խաղաղութեանը եւ իրենց տիկնոջ երջանկութեանը, սակայն Ջապելի մեծ եւ զգայուն սրտէն չի կրցան խլել Փիլիպի փուշը, որչափ այլ երախտաւոր ճանչնար իր կրկին անգամ հայրագլուխ եղած Կոստանդինը՝ Ջապել կ'իմանար որ ոչ միայն անոր թեւոց տակն է՝ այլ կերպով մը եւ ճանկերուն . եւ այս ճանկերը շատ սուր եւ արիւնոտ կ'երեւէին իրեն . շեթում այլ սիրուն ձագ մ'էր, բայց բազէի կամ արծնոյ ձագ: Ջապել՝ որսերէ զգուած՝ անխռով խաղաղութեան բոյնի մը կու փափագէր, կ'ուզէր մէկ ուժով մը զինքը բազէի եւ արծնոյ չհասած բարձրութեան ծոցը ձգել, ու մնաք բարով ըսել թէ հարսնութեան եւ թէ թագաւորութեան պսակին, որոյ համար պատճառած կու սեպէր երկու կտրիճներուն (Ռուբենի եւ Փիլիպի) իրեն մէկմէկէ մերձաւորներուն՝ կարճ օրով ու սեւ սգով ցաւալի մահերը: Մտածածը մեծ եւ յօժար, բայց ի գործ դնելն էր դժար, պայլ պարոն իշխանք եւ եպիսկոպոսք կու յորդորէին գնա ի կենակցութիւն շեթոյ եւ ի տիկնութիւն . ինքն իբրեւ անօգնական աղաւնեակ եւ որոջ՝ մնչէր մայէր, լայր ու լռէր: Կամայ ականայ նշանելով նա ընդ պատանոյն (1226) թողուցին որ ժամանակն այլ յորդորէ զսիրտ դշխոյին, եւ ապա մեծահանդէս կատարեն թագօրհնէքը:

Այն միջոցին սրբասէր աղաւնին սրտին միամտութեան հետ հոգւոյ խորագիտութիւն միացնելով՝ ուզեց որ երթայ մայրը տեսնէ՝ թողուցին իշխանքն . յուսալով որ սիրտն այլ հանգչի եւ մխիթարուած դառնայ: Մայրն՝ Իգապել՝ կամ իր կամօք, կամ Հայոց զգուշութեամբն քաշուեր էր իր Սելեկիա Իսաւրիոյ, եւ իր փրանկ ազգականաց քով կու կենար: Այս ամուր բերդաքաղաքս՝ որ Կիլիկիոյ արեւմըտեան սահմանաժայրն էր, Լեւոն տուեր էր Լատինացի Հիւրընկալ ասպետաց, որոնք մեծ պատուով եւ սպասաւորութեամբ ընդուներ եւ կու պահէին զայրի դշխոյն Լեւոնի . հիմայ անոր ժառանգ դուստրն այլ աւելի պատուով ընդունեցան, մանաւանդ երբ իմացան որ աղջիկ թագուհին չուզէր անկէ եւ մորմէն բաժանուիլ, կամ անոր եւ ազգականացը խրատովն, կամ իր կամօքն, եւ փափագի վանք մը քաշուիլ՝ քան արքունեաց մէջ նագել: Բերդին դռները ամրացուցին: Կոստանդին զայս լսելուն՝ մէկէն զօրքերը ժողովեց, հասաւ պաշարեց քաղաքար . քաղաքապետն կամ գլխաւորն ասպետաց՝ Ֆրէր

(Եղբայր) Պերգրան՝ իր ասպետաց կտրճութեան եւ բերդին ամրութեան վրայ վստահացած՝ դէմ կեցաւ Հայոց . Կոստանդին չուզելով երկայն պաշարմամբ վտանգի ձգել բաղդը, սպառնացաւ Պերդրանայ՝ որ եթէ շուտով չտայ զՋապել, մէկէն պիտի երթայ Իկոնիոնի Ալայէտտին սուլտանին հետ դաշնակցելու, եւ անոր զօրքերն այլ առած՝ գալ բնաջինջ ընելու ասպետաց տունը տեղը: Պերդրան մէկ կողմէ վախճալով սպառնալիքէն՝ մէկալ կողմէն այլ իր եւ իրեններուն պատուոյն եւ քաջութեան նախատինք սեպելով քաղաքը մատնել հակառակորդին, եւ անկէ աւելի՝ իր հիւրերը, հոն ապաւինեալ թագուհիները, ասպետական հնարագիտութեամբ մը պատասխանեց Կոստանդեայ, թէ մենք ոչ կ'ուզենք ձեր դէմ կենալ ու քաղաքս պաշտպանել, եւ ոչ այլ կրնամք մատնել . վասն զի բարեյիշատակ Լեւոն թագաւորն մեզի տուած է, եւ հոս են իր կիներն եւ դուստրն՝ ձեր թագաժառանգն, եւ հոս կ'ուզեն մնալ . ի՞նչպէս կրնամք մենք համարձակիլ մեր բարերարները եւ մեզի դիմողները ձեր ձեռքը տալ իրենց կամաց դէմ . ուրեմն թողուցէք մեզի՝ որ մենք մեր կամօք դուրս ելլենք բերդէն, եւ դուք գիտցածնիդ ըրէք: Այս պայմանաւ ասպետքն իրենց պատուովն ելան, թողուցին զՍելեւկիա, Կոստանդին նորէն ձեռք ձգեց մօրը բունէն բռնած ձագի պէս՝ Ջապելը, եւ հրաւիրեց ի տիկնութիւն եւ ի մայրութիւն Հայոց:

Է

Այլ չկարացաւ Ջապել ընդդիմանալ Հայոց, եւ Կոստանդին ու Հեթմոյ խնդրածին . իմացաւ Աստուծոյ կամքը, եւ յանձնելով զինքը անոր նախախնամութեան . ի ազգին հաւատարմութեան, պայլին պաշտպանութեանը, եւ փեսային սիրոյն, պսակեցաւ ի հարսն Հեթմոյ եւ ի թագուհի Հայոց, եկեղեցական եւ քաղաքական մեծ հանդիսով եւ հասարակաց հաճութեամբ եւ ուրախութեամբ, որոց մասնակից ըրաւ Կոստանդին՝ (ի հաստատութիւն աշխարհին եւ իր զաւակին) այն ազգերը կամ այն թագաւորները՝ որոնց հետ յարաբերութիւն մ'ունէին Հայք: Գրեց առ սրբազան Քահանայապետն, առ կայսրն Ալամանաց, դաշնակցեցաւ ընդ սուլտանին Իկոնիոնի . տէրութեան պաշտօնները յանձնեց արժանաւորաց: Իր անդրանիկը (Սմբատ) սպարապետ դրաւ, մէկ որդին այլ (Լեւոն) մարաշախտ կամ իշխան թագաւորութեան, իսկ ինքն անուանեցաւ Արքահայր եւ Աւագ պարոն . եւ թէ՛ իր թագազարդ տանը եւ հարսին, թէ բոլոր աշխարհին խորհրդատու, եւ ամենահաս օգնական ու

կառավարիչ եղաւ քառասուն տարւոյ չափ՝ ցխոր ծերութիւնն (1263) . Հեթմոյ եւ Չապելի թողլով ասելի փառք եւ վայելքը, իրեն վրայ առաւ հոգ եւ աշխատութիւնը . եւ այսպէս ճշմարտեց իր որդւոյն ըսածը, թէ հարիւրապատիկ փոխարինեց Լեւոնի՝ զինքն ազատելուն ի կապանաց սուլտանին, անոր դստեր ասանկ հայրութիւն եւ հագարապետութիւն ընելով . եւ ճանչնալով միշտ նա ժառանգ թագաւորութեան Հայոց եւ տիկին: Այսպէս այլ ազգն՝ թէ եւ թագաւոր կոչէր զՀեթում, բայց նախապատիւ կու ճանաչէր զթագուհին Չապել, նոյնպէս եւ յետագայք, գոնէ մինչ անոր մահը եւ Հեթմոյ մինակ մնալը . ինչպէս որ այն մօտ ատեններ գրուած յիշատակագիրք ոմանք առանց իսկ Հեթմոյ՝ կ'ըսեն . ,Ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, որդւոյ Չապել թագուհւոյն, դստեր Լեւոնի թագաւորի» . կամ ինչպէս Յովհան Երզնկացի գատելով կ'ըսէ վասն նոյն Լեւոնի (Գ), ,որդւոյ իմաստուն արքային Հեթմոյ՝ հօր, եւ մօր՝ Չապելի սրբոյ թագուհւոյ» . եւ Վահրամ ի չարս թագաւորաց զՉապել միայն յիշէ:

Նոյն ինքն Հեթում՝ ինչպէս որ կ'երեւի, իր անուամբ կտրած դրամներուն վրայ՝ Չապելը իր աջակողմը կեցած կու դրոշմէր, բարձրաձող խաչ մը հաւասար բռնելով, եւ արքունի գաւազան . որ (եթէ չեմ սխալիր) երբեմն միայն Չապելի ձեռքը կ'երեւի, (դրամին եզերքն այլ գրուած է Կարողութիւն Աստուծոյ է . միւս կողմն՝ առիւծ մը խաչակիր, նշան Լեւոնի տան, զոր պահեց եւ Հեթում եւ իր պայազատքն, եզերքը իրենց անունը գրելով, ինչպէս **ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ**:

Մեր երկայնաչար թագաւորաց պատմութեան մէջ ամենէն ցանկալի եւ գեղեցիկ մասերէն մէկն է Հեթմոյ թագաւորութիւնն, (որ մեծ մասամբ այս օրուան յիշատակէս դուրս է) եւ շատ երջանիկներէն մէկն, գոնէ երկու թագակցաց կենակցութեանն ատեն: Հեթում՝ որ երբեմն իբրեւ զքոյր զգուեր էր զՉապել իր հօր պայլութեան ատեն, եւ հիմայ իբրեւ հարսն լծակից ունէր, պատուէր գնաւ եւ իբրեւ տիկին եւ իր թագին պատճառ: Չապել որ իր առաջին տարաբաղդ ամուսնոյն կուսախառն սէրը եւ ցաւը չէր կրցած ջնջել իր փափուկ սրտէն, շատ տարիներ (իբրեւ 8 կամ 9) չուզեց նոր առագաստը վայելել . մինչեւ երկար փորձով տեսնելով Հեթմոյ գաստութիւնը եւ բարեպաշտութիւնը, յօժարութեամբ կ'ուզէր անոր թագաւոր հռչակուիլն: Կուսութիւն քան գամուսնութիւն նախապատիւ սիրելի էր իրեն, բայց վերջապէս հաւանեցաւ բոլոր տէրութեան մը փափագին եւ

օգտին . սիրեց նոր ամուսինը, նախախնամութիւնն այլ օրինեց իրենց սէրը եւ պարգեւը ըրաւ: Չապել 11 ամեայ էր պսակուած ատեն եւ իբր 36 ամեայ բոլորեց կենաց պսակը . իրենց թագակցութիւնն եղաւ յամին 1226, իսկ անդրանիկ որդին յիշուի իբրեւ տասն տարի վերջը: Ութ գաւակ ընծայեց, երեք մանչ եւ հինգ աղջիկ . առաջին՝ Լեոն (Գ) թագաւոր Բ, Թորոս Գ . Ռուբէն որ շատ չապրեցաւ երկրիս վրայ . (դստերքն) Դ Ֆիմի, որ Սիդոն քաղաքին գաղղիացի իշխանին՝ Յովհաննու Իպլինեան՝ կին եղաւ . Ե Սիպիլ՝ կին Պեմունդայ Չ . Անտիոքայ բրնձին . Չ, Ռիթա կին Սարուանդիքար բերդին տիրոջ, (գոր արեւմըտեայք Sire de la Roche անուանեն) . Է . Մարիամ՝ կին Կիտայ Իպլինեան (Guy d'Isbelin) գաղղիացի սենեշալին Կիպրոսի (senechal) . Ը Իզապել, իր մօր եւ մամուն անուանակից, որ շուտով թաւ յերկինք:

Ը

Չաւակաց զարգացման եւ դաստիարակութեան խնամքը չսկսած, Չապել՝ իր տիկնութեան առաջին տարիներն, ինչպէս Ֆիլիպի ատեն այլ, իր անձնական կրթութեանը կու պարապէր, մասնաւոր սիրով եւ յօժարութեամբ բարեգործութեանց եւ ուսման, հետեւելով իր հօրը փափագանաց եւ օրինակին, եւ ջանակից գտնելով իր փեսային, երկուքն այլ իրենց աստիճանին կար՞որ փառք եւ պատշաճ կու սեպէին զգիտութիւնս, մանաւանդ սուրբ գրոց, գրասիրաց եւ գիտնոց ձեռնտու կ'ըլլային, կու պատուէին, ընտանեքար կ'ընդունէին, հարցընէին, եւ իրենց համար գրել տային:

Երբ մեծանուն վարդապետն (եւ պատմիչն) Վարդան Արեւելցի ի Կիլիկիա՝ կաթողիկոսին քով, Հեթում եւ Չապել մեծ պատիւ ցուցին իրեն, եւ իբրեւ աշակերտք՝ ի սուրբ գրոց եւ ի քերականութենէ խընդիրներ կու հարցընէին . որոց պարզ եւ ժամանակին դիւրահասկանալի լեզուովն պատասխան եւ մեկնութիւն գրած է Վարդան . մէկուն մէջ կ'ըսէ առ Հեթում, յիշելով զթագուհին . «Այժմ հայնց արա՛ իմ Պարոն, սակաւ մի աշխատեա (ի կարդալն) . քո սակաւ աշխատիլն՝ առաւել է քան զայլոց չտան...

Եւ զոգի իմ տառապեալ եւ տկար յիշեսցես, որ զքեզ սիրէ առաւել քան զասել... Բայց աղաչեմ զպարգամիտ (տգէտ) մարդ եւ զառաքինի՝ մի հարցանել (այս

դժուար խնդիրները), որ չամաչեն, զի (եւ) ես նախահոգութեամբ գրեցի . եւ թէ առժամայն զիս հարցանեն՝ եւ ես գտանիմ տկարացեալ . վասն որոյ մի մեղադիր լինիր ժմուն (առժամայն մէկէն) չգտանողացն գտեսութիւն բանին: Եւ ես գիտեմ որ այս չէ թագաւորական իրք, (գրած գիրքն) այլ ոսկէգիր պիտէր եւ ճարտար գրչի . ես շատ պատճառ ունէին՝ որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս»... Բայց սիրովն հրաշագործի յաղթահարեալ եղեն պատճառն, եւ որպէս տեսանէք՝ եղեւ . թէ կամիս՝ դիրին է տալ փոխել յաղէկն (մաքուր օրինակել), որ հեշտ կարդայք, եւ թող Գրիգորէսն փոխէ, որ բան չկորնչի: Բաց իմ կամ է որ իմ մատանց սատարն՝ մնայ առ ձեզ . ո՛ր գիտէ թէ անլի շնորհոր լինի ձեզ, վասն յուսոյն իմոյ որ առ Տէր, եւ սիրոյն՝ որ առ ձեզ, զի այնց (այնպիսի) ճառ եւ պատմութիւն չէ՝ որ շատ աշխատանք տանին, եւ ապա բան գտանեն, թէ թուրք մի կարդաս ժմուն կամ երկուք՝ գտանես յոլով խորհուրդը: Եւ՞ Աստուծով՝ տղայահասակ եւ մտոք եւ աչօք զօրաւոր էք . եւ ի միանգամ կարդալն սակաւ ինչ աշխատիք, եւ յայլն, անհոգ լինիք: Եւ զի արքայ եւ արքայուհի ի միում մարմնի տեսանի, եւ հասարակ է հոգեւորն եւ մարմնաւորն, թէ Աստուծով իրք մի օգուտ լինի ի գրելոցդ կամ մխիթարութիւն՝ երկուցդ (այլ) լիցի: Եւ զակնդ բազմագոյն եւ պայծառ՝ որ պսակէ զձեզ յաւիտեան (գիրքն), թող Թագուհի պահէ, եւ ի պիտոյ ժամս՝ առնոյք ի նմանէ . եւ նմա հրամայէ Պօղոս հարցանել զձեզ եւ զպատեհն ծանուցանել, եւ պարտական են, ասէ, ապրեցուցանել զիրեարս՝ առն եւ կնոջ: Եւ զերկոսինդ ապրեցուցէ Տէր Յիսուս կենդանութիւնն ձեր՝ ի խնամս Հօր եւ ի գութ Հոգւոյն սրբոյ, յոռոգումն սննդեան դալարարձակ տնկաբողբոջ շառաւեղեալ ոստոցդ, ծիրանածին տղայոյդ, ի գիրկս Սիոնի սրբոյ . ի կատարումն պսակման հայակոյտ ազնուական ազգաց եւ ազանց, տոհմից ազատաց, ազատեցուցիչք՝ արեանառու զարմից, լծագիրք եւ բեռնաբարձողք, կորացուցիչք օտար ազգաց . ի փառս փառաւոր եւ պաշտեցեալ Աստուածութեանն»:

Զապելի ձեռնտութեանն առ ուսումնասէրս՝ գեղեցիկ վկայ եւ պտուղ մ'այլ է իր որդւոյն (Գ . Լեւոնի) քարտուղարն՝ Վահրամ վարդապետ . որ եւ ինքնին ըսաւ իր տիրոջ թագաւոր օծման օրը ատենաբանելով մայր եկեղեցւոյն մէջ .

«Երանելին Զապել թագուհին, որոյ ողորմութեանն եւ առատ պարգեւացն որ առ ուսումնականսն՝ պտուղ է մերս նուաստութիւն, եւ եւս վեհագունից քան զմեզ, ընդ որում զանճառ բարութիւնսն ընկալցի փոխարէն»: Որով կ'իմացընէ Վահրամ թէ Զապել կամ իր մասնաւոր ծախքովն դաստարակել տուեր էր զնա եւ անոր

նմաններ, կամ պատճառ եղեր՝ արքունեաց դպրութեան մէջ մտցընելու գնա:

Զապելի աւելի եւս հռչակեալ, գովեալ եւ օրհնեալարդիւնքն՝ իր գթած եւ կարեկից սրտին արգասիք՝ ողորմութեան գործքերն էին, որք եւ առանձնական բարեպաշտութեան գործոց քով՝ իր պայծառ հոգւոյն արտաքին ճառագայթներն կրնային ըստիլ: Ժամանակից պատմիչ մը կ'ըսէ. «Յոյժ բարեպաշտ էր կինն այն եւ ողջախոհ. սիրող ամենայն երկիւղածաց Աստուծոյ, եւ աղքատասէր, պահօք եւ աղօթիւք հանապազ ճգնէր»: Իսկ ի թագուիւոյն բարերարեալ ատենադպիրն՝ իր ոտանաւոր գրած Ռուբինեանց պատմութեան մէջ այլ կու դրուատէ գնա այսպէս.

«Սա առաւել բարեպաշտեալ

Եւ հաւատովըն բարձրացեալ,

Սիրով յԱստուած էր միացեալ

Եւ յերկիւղ Տեառն խրատեալ,

Բարի գործովք էր զարդարեալ,

Եւ աղօթիւքըն միշտ մաքրեալ,

Զխոնարհութեան զարդ ըզգեցեալ,

Զպարկեշտութիւն նախապատուեալ»:

Ոչ միայն անթիւ ողորմութեան գործքեր լռիկ եւ անցողաբար ըրաւ Զապել, այլ եւ երկարատեւ մնայուն յիշատակներ թողուց, որոց գլխաւոր կարծենք գլխեալն ի գրոց Հիւանդանոցն Ստյ, զոր կանգնեց յամին 1241. եւ իր ծիրանածին աւակներէն աւելի, եթէ կրնամ ըսել, գթով կու խնամէր զհիւանդս. ոչ միայն առատ ռոճկաւ՝ զոր իր զարդերէն եւ անցաւոր զբօսանքներէն կտրելով՝ կապեր էր անոնց, այլ եւ անձամբ այցելութեամբ եւ ձեռօք դարմանելով, ըստ Խոսրովանուշայ բարեպաշտ դշխոյի Բագրատունեաց: Այս բանին ամենէն մերձաւոր եւ սրտակից վկայ է ինքնին իր փեսայն Հեթում թագաւոր, որ իր մէկ

պարգեւագրին մէջ՝ գրեթէ Չապելի մահուան տարին գրած, այսպէս կ'ըսէ . «Եւ կողակիցս Չապել թագուհի, որ տառապանօք հոգայ կրօնաւորս եւ հիւանդս»:
Անշուշտ բոլոր Ռուբինեանց տէրութեան ատեն անշինջ մնացեր էր այս Չապելի գթութեան յիշատակարանն, թէ եւ Սիս քաղաքն շատ հեղ թշնամեաց եւ կրակի մատնուեցաւ . իսկ յետ բոլորովին տէրութեան վերցունելուն եւ քաղաքին աւերման, եւ ամենայն արքունի յիշատակաց մոռացութեան, Չապելի չքնաղ սրտին յիշատակին այս մէկ փոքրիկ յայտարար նշոյլն՝ յանկարծ յետ 600 բազմադէպ տարիներու՝ մեր օրերս յերեւան ելաւ, (1833): Ստոյ հիմնակուան կաթողիկոսարանէն մղոն մը հեռու արեւելեան կողմէն, հողոյ տակ մնացած սրբատաշ վէմ մը, զոր թէպէտ փճացուց մոլեռանդն նախանձ այլակրօնից, բայց բարեբաղդաբար վրայի արձանագիրն մնաց օրինակուած, եւ էր այսպիսի:

ԿԱՏԱՐԵՑԱԻ

ՅԱՐՄԱՐՈՒՄՆ ՇԻՆՈՒԱԾՈՅ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՍ

ՔՐԻՍՏՈՍԱՍԷՐ ԹԱԳՈՒՀԻՈՅ ԶԱՊԵԼԻ

Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՅ ՈՂ .

Յուսալի է որ ազգերնուս երախտագէտ պատկառանքն եւ սէրն առ յետին գերահռչակ մայրն եւ տիկին իւրեանց՝ Չապել, չուանայ անոր ուրիշ յիշատակ այլ յերեւան հանել, ի փառս անցելոցն եւ ի մխիթար մնացելոցս:

Թ

Բայց Չապելի ամենէն մեծ եւ գովելի շնորհքն՝ իր սրբասէր եւ երկիւղած կենցաղավարութիւնն էր, զոր այնպէս գմայլելով յիշեն ամենայն ականատեսքն եւ մերձաւորք ժամանակաւ, ինչպէս քիչ մ'առաջ լսեցիր . որոց մէկն այլ համառօտիւ կոչէ զնա ,Ամենագով թագուհին Չապել» . միւս մը՝ ,զգուշակենցաղ թագուհի եւ ըստ Աստուծոյ քաղաքավարեալ» . ուրիշ մ'այլ՝ թէ «Աստուածահաճոյ կենօր կային ի Քրիստոս» (ընդ Հեթմոյ): Իր բոլոր հոգն իրեքի դարձընելով՝ առանց իրարմէ բաժնելու, ի խնամս մայրական եւ տիկնական, (որոց համար իմացաւ իր կոչումը, եւ թէ անկէ հրաժարելն՝ իր աշխարհքին մեծամեծ շփոթութեանց եւ

կոռոց պատճառ պիտի ըլլար), ի խնամս աղքատաց եւ կարօտելոց, եւ ի խնամաներքին մարդոյն՝ իր հոգւոյն . գոր եւ յարքունիս եւ ի լծակցութեան առն թագաւորի՝ իբրեւ ի կուսաստանի ամօթխածութեամբ եւ համեստութեամբ զարդարէր . եւ բազմաբողբոջ զաւակացն միանգամայն գորովի մայր եւ արթուն դաստիարակ էր: Եւ այնքան պարտուց եւ պատշաճից մէջ՝ երբ մինակ ըլլար յարքունիս (շատ հեզ Հեթոյ պատերազմի կամ ուրիշ գործոց համար հեռանալովն), յառանձնութեան պալատանն ճգնէր պահօք եւ աղօթիւք: Բայց իր աստուածասէր եւ մարդասէր սրտին միշտ բաւական չէր ըլլար առանձնակեաց սրբութիւնն . շատ հեղ պալատէն դուրս կ'ելնէր՝ թէ իբրեւ յայտնի թագուհի եւ թէ իբրեւ ծածկեալ անձանօթ անձ մը, երթալ վագել՝ ուր որ բարեպաշտութիւն եւ ողորմածութիւն կրնային տանիլ: Կ'երթար երբեմն իր սիրելի գբօսարանը, իր դաստակերտ թէատրոնը՝ լսելու սրտառու ձայներ, կ'երթար իր Հիւանդանոցը եւ Աղքատանոցը . կամ ուրիշ հիւանդանոցներ եւ առանձին տուններ, ուր այլ որ լսէր թէ հիւանդ մը կամ երեսէ ընկած մը կայ, կամ կարօտ մը թէ մարմնաւոր թէ հոգեւոր դարմաններու: ...

Կու յիշեն զմեծ եւ դիւցափառ կայրսն Օգոստոս, որ իմաստութեան այլ պատուող՝ շատ հեզ կու հրաւիրէր իր առանձին սեղանին կցորդ՝ իր ժամանակին երկու մեծ բանաստեղծքը, Վիրգիլիոս եւ Ովրատիոս . ասոնց մէկն, կ'ըսեն, շնչառութեան նեղութիւն ունենալով՝ ստէպ հեկեկալու ձայն կու հանէր, մէկայլն՝ աչքը ճպոռտ՝ ստէպ արտասունք կաթէր: Օգոստոս կու ծիծաղէր ու կ'ըսէր . «Նստեալ կամ ես ընդ մէջ արտասուաց եւ հառաչանաց»: Վերցու'ր գլուխդ, ով տիեզերակալ սեբաստոս Օգոստոս, որոյ մեծութեանդ արձաններն եւ կամարներն ի Տիբերիսէ մինչեւ ի Սանգարիս դեռ կանգուն են, որ Անկիւրիոյ յիշատակարանիդ մէջ յիշես Հայոց թագաւոր մը դնելդ այլ . տե'ս (եթէ կրնան տեսնել այն աչքերն՝ որ 14 տարի մէկտեղ ապրելով՝ չտեսան գերկնից եւ գերկրի լոյսն՝ Քրիստոս) տե'ս գՀայոց թագուհիս այս, որ Քրիստոսի խաչին նշանաւ թագը կապեր եւ բարձրացուցեր է . տե'ս ով մեծդ եւ ամենամեծդ յերկրի, տե'ս այս փոքրիկ դշխոյս Կիլիկիոյ, ինչպիսի՝ արտասուաց եւ հառաչանաց մէջ նստեալ կայ, եւ կու սիրէ նստիլ ընդ երկար . լսեցի'ր դու այլ այսպիսի հեկեկանք մը . սրբեցի'ր այսպիսի արտասունք մը . նստա'ր երբէք ընդ մէջ հեծութեան հիւանդաց եւ արտասուաց աղքատաց: Տե'ս մենք տեսնենք հոս գԶապել . ի'նչպէս ոմանց առատապէս ստակ, զգեստ եւ դեղ բաշխէ, ոմանց անձամբ այլ ծառայէ, սփոփէ,

մխիթարէ . Ի՞նչպէս, շատերը՝ ասելի առատ ու քաղցր սրտով եւ բերնով կու յորդորէ հոգինին հոգալու . հին եկեղեցոյ զգաստ այրեաց եւ սարկաւագուհեաց նման՝ կու սովրեցնէ տգիտաց զկանոնս եւ հրամանս հաւատոց . կու սիրեցնէ անհոգներու՝ եկեղեցոյ սուրբ խորհուրդները, կու յիշեցընէ իրենց անցեալ վարքը . եւ զոչումն կու շարժէ խիստ կամ աղտոտ սրտերը . խոստովանել կու տայ մեղքերնին եւ սուրբ հաղորդութեամբ զօրացընել հոգինին . եւ այսպէս զոմանս մարմնով բժշկէ, զոմանս այլ հոգով յաւիտեան հանգչեցընէ: Իսկ այնպիսի տեղուանք՝ ուր որ պատշաճողութիւնն կամ ատենն չեն թողոր իրեն երթալ, իր հաւատարմաց մէկը կու դրկէ՝ նոյն խնամք եւ հոգը մատուցանելու: Չապել այս բաներուս մէջ կու ճանչնար զինքն՝ թագուհի եւ մայր ազգի:

Երբեմն այլ իր սրտին վերաթոյժ կրակէն վառուած ու վարուած՝ կ'ելնէր գաղտուկ հաւատաւորի մը պէս, գլուխը քօղով ծածակած ու ի գետին խոնարհած, հոգով քան թէ աչքով տեսնելով զճամբան . կու փութար կ'երթար ուխտատեղեաց եւ վանորէից դրանց քով աղօթքի կենալու . մանաւանդ ուր որ լսէր թէ սուրբ անձ մը կայ, ոչ միայն հոն անոր մօտ փափագէր հասնիլ, այլ եւ կ'ուզէր նոյն ճամբէն երթալ, նոյն հողն ու քարը կոխել՝ զոր սրբազանն կոխած էր: Քանի~ լոռ եւ անշփոթ ժամեր, քանի~ մութ ու ցուրտ գիշերներ, լուսնկայ կամ անլուսին երկինք՝ տեսան մեր ջերմեռանդն ուխտաւորը՝ անծանօթ եւ անմարդաձայն ճամբուն վրայ . ոչ ձմրան ձիւն ու բութ, ոչ տօրոսական ցուրտ պախարցին, ոչ հողմակոծ ծառերուն եւ ջրերուն մրմռալն, գազանաց մոնչել ու կանչելն, եւ ոչ յանկարծ դարանողի մը եւ իր առաջին պայլը սպաննող աւագակին պատահելու վախն, կրնան արգիլել զսրբասէր թագուհին: Իբրեւ այն հրաշալի հարսն տիեզերական փեսային խանդակաթ՝ կու լսէր անոր ծածուկ ձայնը . «Ե՛կ ի Լիբանանէ (ի քո պալատանէ) հարսն . եկ այսր ի Լիբանանէ . եկեցես եւ անցես ի գլխոյ հաւատոյ, ի կատարէ Սանիրայ եւ Հերմոնի, ի մայրեաց առիծուց եւ ի լերանց ընծուց» . եւ կ'անցնէր կ'երթար իբրեւ գաղաւնին միակ կատարեալ եւ գեղեցիկ՝ կենալու սրբութեան տաճարաց դրանգեաց ներքեւ, անձայն լոկ աղօթքով՝ սրտանալու ի սէր հոգւոյն տիրոջը, եւ սրտացընելու գնա իր մաքուր սիրոյն: Երբեմն այլ ճամբուն վրայ կանգ առնելով, հագիւ վանաց եւ եկեղեցեաց դրանց մօտեցած՝ կ'ընկնէր ի ծունկս, կու պագնէր սրբազանից կոխած գետինը, կու թրջէր մարգարտակաթ արտասուօքը, կու քսէր գալար դէմքերը այն կրկին սրբեալ հողոյն ու կաւոյն վրայ . անով կու շփէր շպարէր թագուհին Հայոց իր

պայծառ հոգւոյն դրսի հայելին: Այս էին սիրելագոյն զարդարանք եւ գեղերանք եւ զքօսանք Չապելի:

Այսպիսի դէմք, այսպիսի սիրտ, այսպիսի հոգի՝ ի՞նչ կերպով կրնար երեւիլ աշխարհային եւ թագաւորական հանդիսից մէջ: Ինչպէս որ կու վայլէր սուրբ եւ զգաստ դշխոյի մը . որ իր ամեն պարտքը եւ պատշաճը գիտելով՝ չէր պակսէր եւ ի տօնից եւ յընկերութեանց, անոնց նոր վայելչութիւն մ'աւելցընելով իր չափաւորութեամբ եւ պարկեշտութեամբը . եւ ինչպէս արքունի ծիրանեաց վերարկուք չէին կրնար խափանել իրենց ներքեւէն հագած խոշոր խայթող զգեստը, եւ ոչ այլ շնորհագեղ թափանցիկ ժպիտն՝ հոգւոյն զուարթութեան ճառագայթը . աս էր զինքը աւելի պատկառելի ընծայողը՝ քան իր ծաղկած հասակն եւ ծանրագին թագն: Ոչ որ երբէք լսեց այն շրթունքներէն աւելորդ խօսք կամ կատակ մը, եւ ոչ ձայնով ծիծաղ մը փրթաւ բերնէն, ծանրիկ լրջութիւնն՝ բնական ձեւ եւ գոյն կ'երեւէին իր կերպարանացը:

Ժ

Բաներուս բարեբաղդաբար վկայ ունիմք, Հայկակ, Ժամանակից յիշատակագիրներն, բայց դժբաղդաբար՝ այսչափիս միայն, ու՞ր էր թէ աւելի ըլլային կամ մեզի հասնէին այսպիսի յիշատակք, եւ այլ աւելի բաներ պատմած ըլլային Չապելի վրայ . գուցէ մեր միջէն այլ ելնէր Մոնղալանպէր մը մանրամասնաբար գրելու Հայոց սրբակենցաղ դշխոյին վարքը, որպէս նա Ունկարացի դշխոյին եւ Չապելին (Եղիսաբէթ): ... Այս յիշատակս՝ որ յանկարծ բերնէս ելաւ, կու ստիպէ զիս, Հայկակ, խորհրդածութիւն մ'այլ ընելու եւ ցուցընելու զարմանալի եւ վերնախնամ հանդիպակցութիւններ այս երկու թագուհեաց մէջ, որ թերեւս դեռ դիտուած չեն եւ կ'արժեն մտադրութեան: Երկուքն այլ համանուանք . երկուքն այլ Ժամանակակիցք, դշխոյն Կիւիկիոյ եւ դշխոյն Թորինկիոյ . ասիկա՝ իբրեւ տասն տարի յառաջ ծնած քան զմերն, 20 տարի այլ անկէ առաջ բոլորեց կեանքը . նա երկու երկվեցեակ տարի ապրելով, մերս՝ երեք: Երկուքն այլ չորս տարեկան էին՝ երբ իրենց վիճակին տիրուիի սահմանուեցան . երկուքն այլ նոյն մէկ տարուան մէջ (1221 2) պսակուեցան . Չապել ընդ Ֆիլիպի, Եղիսաբէթ ընդ Լուդվիկ Հերմանայ գաւառատեառն (Լանտկրափի): Բայց մեծագոյն եւ հրաշալիսառն հանդիպուածն այս է, որ ատեն

մը՝ քանի մը տարի սահմանուած էր՝ որ այս երկու լեռնաբնակ հաւքալներս
 իրարու քոյր ըլլային . Թուրինկիա եւ Կիւլիկիա սխրալի կերպով գիրար
 ողջունեցին: Եղիսաբեթ՝ դուստր է այն Անդրեասի եւ քոյր այն Անդրեասի՝ որոց
 մէկն Չապելի այր . միւսն սկեսրայր պիտի ըլլային . եւ եթէ անոնք չեղան, եթէ
 Չապել չեղաւ կողակից կրտսեր Անդրէի, եւ եթէ երկու սրբաճեմ աղանիքն չեղան
 թեւակիցք մէկ թառի, մէկ սեղանի, մէկ խորանի քով, եթէ Ունկարաց սուրբ
 օրիորդն երիցութեամբ հասակին չգրկեց ու գգուեց զօրիորդ Հայոց, եւ ոչ սա
 բազկիկ բոլորելով անոր նագելի վզէն կախուեցաւ, սակայն երկնաւոր բաղդն
 գուգեց դրեց ըրաւ զանոնք քոյրակից, գործակից, հոգեկից: Ինչ մասնաւոր
 առաքինութիւն եւ գործ տեսանք Չապելի վրայ, գնոյն պատմեն եւ Եղիսաբեթի
 վրայ . երկուքն այլ նոյնալէս սրբասէր, աշխարհատեաց, պահեցող, աղօթող,
 աղքատասէր, հիւանդապահ: Չապել վանաց եւ եկեղեցեաց դրանց քով
 կ'աղօթէր: Եղիսաբեթ երբ իր պալատին մատրան դուռը գոց գտնելու ըլլար՝
 դուրսը ծունկ դրած կ'աղօթէր . Չապել իր մայրաքաղաքին՝ Ստյ մէջ՝
 հիւանդանոցը շինեց, որ ուզած ատեն երթայ դարմանէ ցաւագարները .
 Եղիսաբեթ իր Մարպուրկի ապարանից ստորոտը շինեց հիւանդանոց մը,
 նոյնալէս խնամք տանելու: Երկուքին ամուսինքն այլ տեսնելով իրենց ընկերին
 բարեպաշտութիւնը՝ թողուցին համարձակ եւ գործակից այլ եղան անոնց
 առաքինի գործոց: Երկուքն այլ գրեթէ նոյն մէկ տարւոյն միջոց (1225 6) իրենց
 երկրաւոր մեծ կորուստն ըրին, Չապել զՖիլիպ, Եղիսաբեթ զՀերման . սա 20
 տարւոյն երեք զաւակօք այրի մնացած՝ իր աներձագին գրգռութեամբը՝ իբրեւ
 տէրութեան գանձը վատնող (առ աղքատս), հալածեցաւ յարքունեաց եւ իբրեւ
 անաշխարհիկ պանդուխտ վարած մնաց եւ մեծ չարակրութեամբ եւ աւելի մեծ ու
 սրտառուչ համբերութեամբ, մինչեւ հալածողն անգամ զգաստանալով՝ նորէն
 դարձուց զտիկինն յարքունիս . բայց նա իր աւակաց վիճակն ապահովացընելէն
 ետեւ՝ քաշուեցաւ պալատէն դուրս առանձին անակի մը մէջ, եւ միանձնական
 զգեստ հագնելով (Ս . Փրանկիսկոսի երրորդական կարգին), քիչ ատենէն մեծ
 ճգնութեամբ եւ սրբութեամբ կնքեց կեանքը (19 նոյեմբ . 1231) եւ քանի մը
 տարիէն (1235) դասեցաւ եւ յեկեղեցոյ ի կարգս սրբոց: Այս վշտաց եւ
 հալածանաց՝ կերպով մը կրնայ համեմատուիլ նոյն ատեն Չապելի ցաւը՝
 Ֆիլիպի սպանման վրայ, առանձնաւոր ի Սելեւկիա, եւ բռնի բերուիլն ի Սիս
 յընկերութիւն Հեթմոյ: Եւ եթէ սա այլ Հերմանայ պէս վաղամեռ ըլլար՝
 անտարակոյս է որ Չապել այլ Եղիսաբեթի միանձնական կեանքն կ'ընտրէր,

որուն արդէն այնչափ փափագեր էր յառաջ քան գպսակիլն ընդ Հեթմոյ:
Նախախնամութիւնն այսչափ սահմանեց երկրի վրայ նմանակցութիւն այս երկու
թագուիեաց, որոց անշուշտ աւելի մեծ է նմանութիւնն յերկինս, ուր՝ թէպէտ քանի
մը տարի ուշ եւ աւելի ապրելով, բայց դեռ շուտ եւ անկատար կենօք՝ թռաւ եւ
Զապել առ գուգակից անուանն, բաղդին եւ հոգւոյն, թողլով անմխիթար յերկրի իր
երկրաւոր գուգակից եւ թագակիցը, անկէց ունեցած գաւակները, (որոնց ոմանք
դեռ հազիւ իրենց մօր կաթը եւ սիրոյն մեղրը ճաշակեր էին) եւ բոլոր զինքը
պատուող եւ պաշտող աշխարհը:

ԺԱ

Արդեօք դիպուածական ցա՞ւ մը, թէ իր փափուկ սրտին հին հարուածէն բուսած
վէ՛րքն, թէ մանաւանդ սաստիկ փափագն առ լաւագոյն երանաւէտ կեանս, իր
արդէն գեղեցիկ կեանքը փութացուցին ի գեղեցկագոյն վախճան, առ ի փոխել
յամենագեղեցիկ կենդանութիւն: Ո՛հ . քանի՛ քաղցր եւ անոյշ էր այն հոգւոյ
հրաւէրքն՝ որ եկաւ իրեն (ի 22 յանուարի 1252 ի) . ձա՛յն ցանկալի երկնաւոր եւ
անմահ փեսային, որուն հարսնացեալ է ամենայն մաքուր եւ մաքրասէր հոգի .
վասն զի ինչո՞ւ է հոգին՝ եթէ ոչ առ միանալ իր ստեղծողին հետ . ձա՛յն
Քրիստոսի Աստուծոյ, զոր ոչ միայն հոգւոյն անշունչ անյօդ ականջովն իմացաւ
Զապել, այլ եւ զգալի կերպով մը լսելով՝ անպատմելի ուրախութեամբ իմացուց
իրեն քովն եղող եւ իբրեւ հիւանդի նայողներուն, թէ ահա լսեմ ձայն՝ որ կանչէ
զիս: Ե՛կ աղանի իմ, ե՛կ կատարեալ իմ, ե՛կ սիրելի իմ . եւ այս խօսքս իբրեւ
վերջին բարով մնաք ըսելով մերձակայիցն, հոգին՝ հոգւոյն փափագողաց հետ
խառնուեցաւ, թողլով յերկրի քրմծիծաղ ու պայծառ՝ այլ անշարժ մարմին մը, ի
սուգ եւ ի սէր հասարակաց: ...

«Իսկ թագուիին զկեանս աւանդեալ

Ու ի կէտ կոչմանըն ժամանեալ,

Ձայն ի յերկնից ըզնա կոչեալ,

Չոր իւր ունկամբն յայտնի լրեալ,

Ե՛կ աղանի՛ իմ, ասացեալ,
Իսկ նա յորժամ գայս ձայն լրեալ
Ջրարթագին սրտի բերկրեալ,
Տեալեամբ կերպին զրարճացեալ
Եւ ի հոգին իւր ցընծացեալ,
Մերձակայիցըն գայս ազգեալ,
Եւ ընդ պատմելն՝ իսկոյն փոխեալ,
Ջհոգին ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զխեցին ունայն՝ յերկրի թողեալ,
Չոր քահանայքն ակումբ առեալ
Զնա օրհնութեան հողոյ տրեալ,
Արդ թագուհին յերկրէ ելեալ
Եւ առ Քրիստոս վերափոխեալ»:

Այսպիսոյ բարոյ եւ բարերարի, սրբակեաց եւ սիրելոյ թագուհոյ, հարսին եւ մօր մահ՝ ո՞րչափ ցաւալի եւ սգալի եղած է կենակցին, գաւակացն, մերձաւորաց, պաշտօնէից եւ բոլոր աշխարհին, ազատաց եւ ռամկաց, աղքատաց եւ հիւանդաց, կրօնաւորաց եւ զինաւորաց, քեզի դիւրագոյն է հասկանալ, ինծի աւելորդ ըսելն, Հայկակ, աւելորդ սեպեմ եւ խառնել զքեզ անոր երկարաչար յողարկաւորաց մէջ, յոր կրնամք եկած սեպել զքովանդակ Կիւիկիա եւ զմասն Կիպրոսի եւ Անտիոքայ, եկեղեցական, քաղաքական եւ զինուորական խմբերով, որոց մէջ չեմ այլ կրնար գտնէ պաղած պատկառանօք մատնանիշ չընել՝ երկու գանազան ձեռով բարձրապատիւ ալեւոր գլուխներ, երկու նահապետքն Հայոց, երկու անուանակիցքն, Կոստանդին կաթողիկոս եւ Կոստանդին արքահայր,

խնամակալք եւ դաստիարակք թագուհոյն եւ հայրաբար սիրողք, որք իբրեւ երկու մեծամեծ մայրիք մրկաշարժ անտառի մը՝ իրենց դիմաց իրենցմէ շատ դալար եւ ծաղկաբողբոջ միջաբեկեալ ծառին վրայ ծռած՝ դողդոջուն ճիւղերով կ'ոլորին կ'երերան: Բայց դարձրնենք աշուրնիս իրեն գիլ ու դալար բարակ բարունակներէն, որոց անդրանիկն (Լեւոն) դեռ հագիւ 16 տարեկան է . դարձրնենք մանաւանդ այն փափուկ տնկոյն նեցուկ ու նշդարիկ եղող արքակաղնոյ նման պանծալի՝ բայց հիմակ քակեալ մենացեալ եւ կորացեալ թագաւորէն... Հեթում՝ այն օրերն մեծ պատրաստութեան մէջ էր, հարկաւորաբար երթալու առ Մանգու խաքանն Թաթարաց՝ յաշխարհի հեռի: Չապելի յանկարծ յանդարձ աշխարհ երթալն՝ այնքան խոր եւ արժանատի սգով պատեց զայրիացեալ թագաւորն, որ երկու տարի չկարցաւ հեռանալ սեռու սենեկէն, ապա թէ գնաց:

Հեթում՝ ոչ կենակից եւ թագակից միայն էր Չապելի, այլ եւ անարգել գործակից անոր սրտին բարի բերմանց . եւ եթէ իր արքունի անհրաժեշտ պարտքն եւ ի մօրէ որբացեալ զաւակներուն հոգն՝ չպատուիրէր, թերեւս աւելի շուտով թողոր ինքն այլ թագը, եւ առանձնակեաց հոգեկեաց, մ'ըլլար . ինչպէս որ ըրաւ այլ վերջը, յետ տեղաւորելու իր դստերքը՝ եւ թագը թողլու (յսմին 1269) առ անդրանիկն Լեւոն: Եւ սա իր ցանկալի եւ ցաւալի մօրն անմոռաց յիշատակը կերպով մը կենդանացընելու համար՝ իր իրեք երեց դստերքն անուանեց Չապլուն, Չապել, Սիպիլ:

Չապել թագուհոյ մահացու նշխարքը անմահութեան մաղթանօք եւ անսուտ յուսովն պատելովու կնքելով՝ հանգուցին ն տապանատուն Ռուբինեան պայազատաց, ի վանքն Դրազարկ, ուր նախ հանգչէր էր տեղոյն շինողն Թորոս Ա, թոռն Ա եւ մեծ Ռուբինի . եւ իրմէ ետքն իրեն ցեղէն շատ պարոնայք եւ պարունուիք . եւ ուր յետ 19 տարւոյ (1270) հանգուցին թագուհոյն քով էր թագակից եւ կողակիցն այլ, թէ իբրեւ արքայ Հեթում եւ թէ իբրեւ Եղբայր Մակար . որ եւ Չապելի պէս բաղդ ունեցաւ օտար սուրբ թագաւորի մը հանդիպակից ըլլալու:

Իրենց երախտագէտ եւ սիրանուէր որդիքն եւ պայազատք՝ արքունի արքապատում Յայսմաւորաց մէջ նշանակեցին Հեթոյն հանգստեան օրը (28

հոկտեմբերի), եւ այս օրս (22 յանուարի) Ջապելի պաշտելի յիշատակը, զոր ի կեանս եւ ի մահուն՝ ճանաչողք եւ մերձագայք՝ սուրբ՝ անուանէին . ինչպէս որ Հեթմեանց յիշատակն այլ՝ ոչ միայն մեր այլ եւ լատին միանձանց հին ժամագրոց ոմանց մէջ անցած է երանելեաց կոչմամբ: Երանի՛ էր ազգիս այլ, եթէ՝ ինչպէս շատ արժանաւորաց յիշատակն անմահացուցեր է, զոմանցն այլ նորէն արթընցընէր: Իսկ քեզ, Հայկակ, անշուշտ ախորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց եւ մերձաւորաց միջի մատղաշ Ջապելաց ծանօթանցնել՝ իբրեւ իրենց նախընթաց օրինակ համեստութեան եւ իմաստութեան ու պաշտպան մեր ազգին վերջի պայազատութեան մէջ ամենէն անուանի, պատուելի, սիրելի եւ սրբենի եղած թագուիին **ԶԱՊԵԼ**: